



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lany

✓

334, 335, 336

128

~~621~~

~~379~~

378

2000

~~621.~~

Լայ

334

կր

ԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆՈՒԷԼ

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

~~379~~

ԱԶԳԱՅԻՆ ՎԵՊ

378




ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ

(Լ. Ա. Յ. Ա. Ն.)

4061

~~203~~



ԹԻՖԼԻՍ

Հայրան Մովսես Վարդանեանի

1888



1652

Доз. Ценз. Тифлисе, 17-го Марта 1888 года

Тип. М. Вартанянца, Тройц. пер. домъ №11



334-2003

15033-50 ✕

28-333



ՈՒԽՏԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՈՒԽՏԱԴՐՈՒԹԻՒՆ



գոտոս ամսին՝ մի շա-
բաթ առաւօտ՝ Նամ-
շուկա գիւղի ծխատէր քահանան Տէր Պետ-
րոսը, առաւօտեան ժամերգութիւնն ու կից
պատարագն աւարտելունց յետոյ, մի համառօտ
ծանուցումով յայտնեց ժողովրդին, թէ միւս
օրը Աստուածածնի վերափոխման տօնն է,
պատարագը պէտք է լինի Բերդի Ս. Աստ-
ուածածնի եկեղեցումը, ուր պիտի օրհնուի եւ
խաղողը:

Այս լուրը թէպէտ մի անսովոր լուր չէր, բայց մեծ տպաւորութիւն գործեց լսողների վերայ, եւ ամենքը սրտի մոռք մի մի խնդրք-ուածք ուղղեցին դէպի բերդի Ս. Աստուածածինը. . .

Երբ որ եկեղեցուց դուրս եկած տուն էր գնում տէր Հայրը, նրա հետքից գնում էր մի պատանի, որ ինչպէս երեւում էր ձեռքում բռնած հաբիգայից, որի մէջ դրուած էին տէր հօր մաշտոցն ու մասնատուիր, տէրտէրի մոնթն էր, այսինքն աշակերտը եւ փոքրիկ տիրացուն: Արութիւն էր նրա անունը, (եւ ոչ Յարութիւն, ինչպէս շատերը կոչում էին նորան սխալմամբ):

Արութիւնը այս գիւղից չը լինելով՝ շատ ուրախ էր, որ միւս օրը իւր ազգականներից շատերը մօտակայ գիւղերից կը գան ուխտ, եւ նրանց կը տեսնի: Զը կարողանալով անտարբեր մնալ մի այսպիսի ուրախ ընդունում, պատանի Արութիւնը մօտեցաւ տէրտէրին եւ մանկական ժպտով հարցրեց.

— Տէրտէր, էգուց էլ, ամէն տարուայ նըման՝ շատ տեղերից ուխտաւորներ կը գան, չէ է՝

Տէր Հայրը փոխանակ լեզուով պատասխանելու, գլխով արաւ, որովհետեւ նա իր կիսատ թողած սաղմոսներն էր մոքումը մըրմընջում, բայց Արութիւնին այդքանն էլ բաւական էր: Նա իսկոյն մի ուրիշ ճանապարհով վազեց մինչեւ տուն, որ մի ընդէ առաջ յայտնէ միւս երեխաներին, թէ ինչքան ուրախ է ինքը. . .

Միւս օրը՝ կիւրակի առաւօտուն՝ կարելի էր տեսնել ուխտաւորների մեծ բազմութիւն:

Նամշուղու եռանկիւնի բերդը, որի հիմնարկութեան ժամանակը պատմութիւնը տալիս է Հայկ գիւցաղնի որդուն՝ Քարթլոս նահապետին, ընկած է մէջ տեղը Խրամ եւ ձալճալ ասուած գետերի, որոնք իրանց խառնուրդով պատում են բերդի երեք կողմից անդնդաձեւ բնական պարիսպներով: Բերդի արեւմտեան կողմից միայն՝ կիսով չափ փլած հաստ պատի մէջ տեղով՝ բացած էր մի մեծ դուռն, որով ներս էին մտնում ջերմեռանդ ուխտաւորները եւ հաւաքւում Աստուածածնի դռանը:

Այս եղեղեցին մի փոքրիկ մատուռաձեւ շինութիւն է, եւ ներսը աւագ կողմին կազնեցրած է մի սեւագոյն բաւականին լայն ու

երկայն որձաքար: Քարի վերայ եղած արձանագ-
րութեան խօսքով՝ նա անուանւում է «Ջուհար
խաչ», եւ շինած է Սմբատ իշխանի ձեռով
մեզանից մի հազար տարի առաջ, բայց ժո-
ղովրդի մէջ եղած աւանդութիւնը այդ քարին
տալիս է հրաշալի ծագումն: «Այդ քարը բու-
սել է ինքն իրան, ասում է աւանդութիւնը,
եւ սկսել է օրէցօր երկայնանալ: Ուզենալով
իւր նշանակութիւնը յայտնել ժողովրդին, մէ-
կին երեւացել է երազումը եւ ասել է նրան՝
«Եթէ ինձ վերայ եկեղեցի չէք շինիլ, ես այն-
քան կը բարձրանամ, որ գլուխս կը հասնի մին-
չեւ երկինք»... Երազատեսը պատմել է ժո-
ղովրդին, եւ ժողովուրդն էլ վախենալով թէ
մի գուցէ՝ ճշմարիտ՝ ասածի չափ բաշտանայ
եւ ժամանակով վայր ընկնի իրանց գլխին,
շտապել են եկեղեցին շինել, եւ քարը դադա-
րեցրել է իր երկայնանալը»:

Մի կողմից տղայ ու աղջիկ, հարսն ու
երիտասարդ, պառաւ ու ծեր՝ միմեանց սեղ-
մելով մոմեր էին վառում յիշած քարի վերայ,
միւս կողմից տէր հայրը կատարում էր պա-
տարագի սրբազան արարողութիւնը: Իսկ Արու-

թիւնը՝ բուրվառը ձեռին՝ համ՝ սարկաւազու-
թիւն էր անում, համ՝ վառուած մոմերն էր
պոկոտում գցում ջրով դրած ամանի մէջը. . .

Պատարագն աւարտելուց յետոյ եկեղեցուց
դուրս եկան տէրտէրն ու տիրացուները խա-
չով, խաչվառով, եւ դուրսը կատարեցին խա-
ղողի օրհնութիւնը:

Այս ընդարձակ տեղը, պարզ երկնքի կա-
մարի տակ կարելի էր տեսնել այժմ բազմա-
թիւ հոգիք, ամենքն էլ, որքան կարելի էր
նրանց, մաքուր հագնուած: Առջեւը կանգնած
էին տղամարդիկ, իսկ նրանց քամակին կանայք,
որոնք իրանց տեսակ տեսակ հագուստովը հո-
ւիտի ծաղկունքների էին նմանում: Բոլոր գիւ-
ղացիք գաղթական ժողովուրդ լինելով, ով գի-
տէ, որ գիւղը որտեղից եկած, ամենքն էլ
պահպանել էին իրանց բուն հայրենիքի հա-
գուստի տարազը: Շատ կանանց բերան փաթա-
թած էր սպիտակ տ ար ու լ բ ր ո Վ, երեսնե-
րին զ ա ն դ ր ու լ կ գ ց ա ծ, երեսի երկու կող-
մից յուլունքաշար հ ար ս ա ն ու լ կ ա պ ա ծ,
ճակատներին շ ա ր ք, որինն արծաթէ եւ ո-
րինը ոսկէ. շարքի մէջ տեղը՝ ջն ա դ. կուրծ-

քերին ու բազումներին ձուլած եւ արծաթէ կոճակներ. հագներին՝ որինը մի ան ա, որինը դէրի ա եւ որինը քաթիբա: Մատերի բերանը բաց էր եւ գլուխը շինած վրացնակ. նշանած ու նշնելու աղջկէքը, նորահարս ու միջահաս կանայք որոշվում էին միմեանցից իրանց հագուստով: Նային եւ սպիտակ հագած կանայք, շինքներին ու բիւլներին կապած արծաթ դրամներ եւ կլորցրած մեղրամոմեր: Դրանք Աստուածածնի աղախիմներն էին, եւ ասում էին «խաչի ղուլ», այսինքն սուրբի գերի: Տղամարդիկ հագուստի կողմանէ շատ նման էին միմեանց, — միեւնոյն ձեւի դաշոյնը կապած ունէին ամենքը եւ միեւնոյն ձեւի տրեխները հագած բոլորը. . .

Բայց էլի մի կողմից անընդհատ գալիս էին նորնոր ուխտաւորներ, որը մի քանի ջուխտ տանը ուրրած մոմ, ձեռնափայտի վերայ թելով փաթաթած, ուսին դրած, կամ փափախի ղաթը խրած՝ շտապում էին դէպի եկեղեցին, ուր մոնում, վառում էին թէ չէ՝ Սրբութիւնը հասնում էր խօկոյն ու վառած մոմերը պո-

կոտում գցում ջուրը: Մատերին դիւր չէր գալիս, որ մոմերն այսպէս շուտով հանգցնում էին, եւ բարկանալով ասում էին.

— Օրհնուած, էս ի՞նչ բան է, որ դու անում ես. թող մի քիչ էրուի է. . .

— Վնաս չունի, պատասխանում էր Սրբութիւնը, էս մոմերն էլի ժամովը պիտի էրուին, սրանց վարձքը էլի ձեր մեռեցների հոգուն կերթայ. . . Հապա ուրիշ տեղեր չէք տեսել, որ ողջ ողջ աքլարներն ու ոչխարները ուխտաւորների ձեռներիցը խլում են. մենք խօմ էնպէս չենք անում. . . Մի վախենաք, էս մոմերն էլի ձեր մեռեցների հոգու համար պիտի էրուին». . . Այս տեսակ խօսքերով նրանց սիրտը շահում էր պարզամիտ Սրբութիւնը, նրանք էլ հաւատալով՝ դուրս էին գալիս մի ջերմեւանդ աղօթք անելուց յետոյ:

Վերջապէս հոգեւոր արարողութիւնն աւարտեցաւ, ամենքն էլ քաշուեցան ծառերի տակը, մատաղները մորթոտեցին, կրակները վառոտեցին եւ բարեկամ բարեկամի գտնելով, ծանօթ ծանօթի, կազմեցին բազմաթիւ խնջոյքներ: Տէր հօրն ու Սրբութիւնն էլ հրա-

վերեցին մի սեղանի վրայ, ուր հաւաքուած էին մինչեւ տասը-քսան գերդաստան, բոլորն էլ զանազան գեղերից, բայց ամենքն էլ միմեանց մօտիկ բարեկամ: Աղջկերքն ածում էին դահիրա-նաղարան եւ պարում, աշըղ Մալջուլթն ու իր աշակերտ Զուլային էլ իրանց սաղի ու քեամանջի ձայները խառնում էին նազարի դմբդմբոցի հետ, եւ երբ աղջկերանց պար գալն ընդհատուի էր, երգում էին հայերէն եւ թուրքերէն տեսակ տեսակ խաղեր: Ամենքի երեսին դրոշմուած էր ուրախութեան գծագիրը, ամենքի շրթունքների վերայ երեւում էր մի քաղցր ժպիտ: Սուփրան լիքն էր սպիտակ փափուկ հացերով, կաթնահունց նազուքներով, պանիրով եւ մատաղի խաշլամով ու խորովածով: Գինին այնքան շատ չէր, բայց էլի այնքան կար, որ երգ չըգիտողին անգամ երգել էր տալիս: Ով ինչ խաղ գիտէր, ասում էր, չլնայած որ արդէն խաղ ասող աշըղ ունէին: Վերջը խնդրեցին տէր հօրը, որ նա մի տաղ ասել տար Արուսթիւնին, որին արդէն շրջապատել էին իր մօտաւոր ազգականուհիքը եւ փոխ առ փոխ գգվում

ու համբուրում էին իբրեւ մի փոքրիկ մանուկի:

— Ասա, քե մատաղ, ասա, խի՞ ես ամանջում, դու մեր Աւետքի տղէն չե՞ս. . . Նա մի մարդ ա որ, խաղ ասելում հարկը աշըղ կըդնի ջէբը. . . Ադա Մանուէլ, վեր կաց գնա էրեխի կշտին նստի, որ ձայն պահես. . .

Այս խօսքերն ասողը մի քէթխուդա մարդ էր, իսկ Մանուէլը՝ նրա որդին, որ Արուսթիւնին հասակակից մի պատանի էր, բայց աւելի առոյգ, քան թէ Արուսթիւնը, որ բաւականին նիհար եւ տկար-առողջ էր:

Տեսնելով, որ տաղ տսելիս մի ուրիշ ընկեր պիտի ունենայ, Արուսթիւնի սիրտն ահ ընկաւ, թէ չըլինի, որ իւր անծանօթ Մանուէլը աւելի լաւ ձայն ունենայ քան թէ ինքը, այդ պատճառով երբ որ Մանուէլը եկաւ նրա մօտ նստեց, Արուսթիւնը նրա տեղը պարզ քաղաքաւարութեամբ լայնացնելուց յետոյ՝ ասաց.

— Դու ասա, ես ձայն կըպահեմ:

— Ես տաղ չեմ գիտում, պատասխանեց Մանուէլը:

Վերջապէս երբ որ «ասա, քե մատաղ, ասա», կրկնեցին ամեն կողմից ու տէրտէրն

էլ հրամայեց, ծոռակ չոքեց Արութիւնը, որին հետեւեց եւ Մանուէլը, եւ երգեց «Խնկին ծառին նման ես» տաղը, վերջումն աւելացնելով «Անթառամ ծաղիկ» շարականը:

— Ապրես, ապրես, Աստուած քո հօրն ու մօրը բաշխի, ձայն տուին մարդիկը հիանալով նրա քաղցր ձայնից:

— Էրնէկ քո մօր աչքերին, լսվում էր կանանց միջից. . . Մանուէլն էլ իւր վերայ մի քաղցր տալաւորութիւն դգալով, սկսեց աւելի մօտ մօտենալ Արութիւնին ու մի զմայլմունքի անմեղ ժպիտ բերանին՝ զանազան հարցմունքներ անել: Այսպէս մի քանի տաղ եւս ասել տուին Արութիւնին, մինչեւ նօթաթը հասաւ զուռնաչի ծականին, որ իր սիրելի զուռնան փչեց թէ չէ՝ մեր պատանիքն աղատութիւն ստացան, վեր կացան սուփրիցը եւ ձեռք ձեռքի տուած սկսեցին ման գալ բերդի մէջ:

— Ես գեռ չեմ էլած էստեղ, ի՞նչ գեղեցիկ տեղ է, էս ի՞նչքան մրգի ծառեր կան, տանձ, խնձոր, կասենաս այգի լինի: Էս որ մեր գեղումը լինի, մէկ հատ չեն թողնիլ ծառի վերայ, բոլորն էլ խակ խակ կըթալանեն,

ասաց Մանուէլը, երբ որ մի քիչ հեռացել էին խնջոյքից:

— Էստեղ էլ չեն թողնիլ, բայց Մովրովն արգելել է, ոչ ոք չի կարող մէկ հատ պոկիլ գեղի բաղերումը պատահում է գողութիւն, բայց էստեղ ոչ ոք չի համարձակիլ մի հատ պտուղ գծլել, Մովրովն իսկոյն կը գանգատուի խաչին, եւ խաչը կըպատժէ գողին:

— Մովրովն ո՞վ է.

— Մովրովը խաչի դուռն է, թասի մօտիկ տուող մի կնիկ է. հրէն այ, էստեղ է կենում իրա մարդի հետ:

— Էն խոտով ծածկած տանը՞:

— Հա:

— Ամառ ձմեռ:

— Հա:

— Բա նրանց տուն չունեն, տեղ չունեն:

— Տուն տեղ ունեն, Կախէթումն է: Ասում են խաչը թոյլ չի տալիս, որ մենք մեր տանը կենանք, ասում է՝ «Իմ դուռն էք, պիտի իմ տակին կենաք»: Էս տեղերն էլ՝ ասում են՝ խաչինն է: Դրա համար էլ գեղա-

ցիք վախսամ են խաչիցը, ինչ որ ուզում է Մովրովը՝ տալիս են:

— Հա՛. . . Բա տէրտէրն ի՞նչ է ասում:

— Մեր տէրտէրն էլ է վախում. ինչ որ էրի-մորթի է ստանում, մեծ մասը նրանց է է տալիս. ասում է «երկիւզալի է, խաչին կը գանգատուին»:

— Հա՛. . . Ասում են էդ տէրտէրը շատ գիտուն մարդ է. էրնէկ ես էլ դրա աշկերտը լինէի: Արութիւն, խօսմ չի՞ ծեծում քեզ:

— Ո՛չ. ահա չորս տարի է ես դրա մօտ եմ, դեռ ոչ մի անգամ մատով դիպած չէ ինձ:

— Ի՞նչ լաւ մարդ է: Ի՞նչ է սորվեցնում քեզ:

— Հին ու նոր Կտակարան, Շարական, Քերականութիւն, Աստուածաբանութիւն, էլի ուրիշ հազար ու մի բան. . .

— Ո՛ւհ, էդ բոլորն էլ գիտե՞ս:

— Ի՞նչպէս չէ: Ես շարադրութիւն էլ եմ անում, ոտանաւորներ էլ եմ գրում:

— Հա՛... Բացագանչեց Մանուէլը, առանց հասկանալու, թէ ինչ բան է շարադրութիւնը կամ ոտանաւորը, բայց այդ չըգիտենալը նը-

րան աւելի զարմացրեց եւ համոզեց, որ Արութիւնը մի չնաշխարհիկ բան է, եւ նրա ձայնն ու գիտութիւնը երկնային մի ձիւրք:

— Այստե՞ղ ուր է կենում, հարցրեց Մանուէլը ձեռքը մեկնելով դէպի մի փոքրիկ խուռ:

— Այստեղ էլ մի հիւանդ մարդ է կենում իրա կնկայ հետ:

— Ի՞նչո՞ւ է հիւանդ:

— Ոտներից սկսած մինչեւ դօտկատեղը չորացած է: Մովրովը թասին մոտիկ է տուել, ասել է «մեր խաչիցն է, պիտի սրա տակին օխտը տարի կենաս, որ պրծնես»... .

— Երեւի խաչին բարկացրել է էդ մարդը:

— Հա՛: Ասում են դա մի թերահաւատ մարդ է էլել, խաչի չի էլել հաւատալիս: Մէկ օր մի հարս նղաւել է, ու սկսել է դրան սպառնալիք տալ խաչի բերանից, դա էլ բարկացել է, բռնել է հարսի մազերիցը քաշքշել, ասել է՝ «դու սատանութիւն ես անում, քեզ խաչը չէ խօսացնում»: Սրա վերայ Խաչը բարկացել է ու դրան էդպէս պատժել:

— Հա՛. . . մեռնեմ խաչի ողորմութիւնին, իմ երեսս դրա ոտի տակը. . . ասաց Մանուէլը

երկիւլից տիրթնելով եւ երեսին խաչ անելով, եւ սկսեցին աւելի հեռանալ մինչեւ հասան Խրամի ձորափը:

— Արի էստեղ մի քիչ նստենք, Արուսիւն, ասաց Մանուէլը:

— Ո՛չ, Մանուէլ, գնանք տեսնո՞ւմ ես էն մէկմէկու վերայ դրուած երեք քարերը, գընանք նրանց վերայ նստենք. . .

— Ո՛ւհ, էս ի՞նչպէս են իրար վերայ դրել էս ահագին քարերը. . .

— Սրանց համար ասում են՝ «երկու եղբայր են եղել, մէկ էլ մէկ քոյր են ունեցել: Երկու եղբայրները երկուսով ներքեւի երկու քարը իրար վերայ են դրել, երրորդը չեն կարացել յետոյ իրանց քոյրը եկել է մի ձեռով վերցրել դրել գրանց վերայ. . .

— Ո՛ւհ, ի՞նչքան ուժով է եղել. . . ով գիտէ, որ երեք գիւղ հաւաքուեն մեծով փոքրով, էլի չըկարենան տեղիցը շարժել:

Մեր պատանիքը վեր բարձրացան, նստեցան երեք քարի վերայ եւ սկսեցին նայել իրանց առաջով ընկած անդնդաձեւ խորութեան

վերայ, որի միջով Խրամ գետը փոփուրն երեսին գնում էր վշալով. . .

— Տեսնո՞ւմ ես ինչ լաւ տեղ է, ասաց Արուսիւնը, ձեռը մեկնելով դէպի Խրամի պատերը: Ահա էն քարքարուտ տեղը լիքն է նըռնով ու թղնով, բայց ոչ զք չի կարող գնալ քաղելու, ճանապարհ չըկայ: Տեսնո՞ւմ ես էն ծակերը, նրանք զաղէք են (քարայրեր), ահ ժամանակներին նրանցում մարդիկ են էլել կինայիս, երեւի առաջ հեշտ է էլել էդպէս տեղեր բարձրանալը: Հիմի էլ, ով որ քաջ քարագնաց է, կարողանում է գնալ էդպէս տեղերը: Ասում են՝ շատ անգամ արծաթ, պղինձ, հին գրուածքներ շատ են գտնում դրանցում. . .

— Բայց որ մէկը վեր ընկնի էդ ահագին բարձրութիւնից, ով գիտէ մեծ պատառն աւանջը մնայ: Մի բան ասե՛մ, Արուսիւն. էստեղ ամեն ինչ զարհուրելի է: Մի կողմից էս անդունդները, էս աւերակ վանքերը, էս ահագին բուրգերը, որ ով գիտէ քաջքերով լիքն են բոլորն էլ, մէկ էլ կողմից էդ թասի մոխի տուող կնիկը: Եթէ նա ամեն դարտակ բանի համար բաժնի գումարտուի, խաչն էլ

334-2003 (5033-54061)



ում ասես՝ կրպատով: Դու պէտք է զգոյշ
կենաս, եղ ինկանը չը ջգրացնես. . .

— Խնչո՞ւ պիտի ջգրացնեմ: Նա ինձ շատ
սիրում է: Անցեալ օրը կանչեց ինձ, թուշիցս
պաչեց, ու թէ՛ «ես ձեր գեղումն էի, քու
մէքն ասեց՝ որ գնաս, իմ տեղակ երեխիս
թուշիցը կըպաչես»: Ես էլ նրա ծծիցը պաչե-
ցի, յետոյ ասեցի՝ «դէգի, մէկ ինձ համար էլ
մտիկ տաս թասի՛դ»: Նա թէ՛ «շատ լաւ»:
Վեր կալաւ թասը, ջրով լեցրուց, թասի պը-
ռունկներին երկու մում վառեց ու սկսեց մը-
տիկ տալ: Մի քիչ պրկշտոտաց, գլուխը թափ
տուեց, մտածեց, յետոյ ծիծաղեց, թէ՛ «լաւ,
լաւ, շատ լաւ բախտ ունիս: Տէրտէր կըգառ-
նաս, բայց կնիկդ կըմեռնի, կերթաս վարդա-
պետ կըգառնաս, յետոյ հպիսկոպոս կըգառ-
նաս, յետոյ կաթող. . .» ուզեց թէ ասել էր,
կաթողիկոս կըգառնաս, մէկ էլ խօսքը փոխեց,
թէ՛ «չէ՛, դու տէրտէր չես դառնալ, քո մօր
սրտինը չի կատարուիլ, ձեր տանը քեզ կատեն,
դու կերթաս հեռու աշխարհքներ, բայց Աս-
տուած քեզ չի կորցնիլ, դու էլի յետ կըգաս
ու անուանի մարդ կըգառնաս»: Ես ասեց ու

սուս կացաւ, մէկ էլ թէ՛ «էս չըլինի, էն կը-
լինի, էն չըլինի, էս կըլինի». . . Ես հիմի չը-
գիտեմ, թէ որը պիտի լինի:

— Ել դրա համար ինչու ես մտածում,
նրա ասած՝ կամ էս կըլինի, կամ էն: Ես իմ
բախտին չեմ մտիկ տալ տուած, բայց հայրս
ասում է՝ «քեզ պիտի տէրտէր օրհնիլ տամ»:
Խնձ հիմի մեր գեղի տէրտէրի տղան է գիր
սորվեցնում, ամեն օր ծեծում է, բայց ես
ձեռք չեմ վերցնում: Հայրս ասում է՝ «Մի
քիչ համբերի. ես քեզ էդ խողարածի ձեռիցը
կազատեմ, կըտանեմ քաղաք, էնտեղ լաւ կը-
սովրեցնեն» . . .

— Երանի՛ քեզ, Մանուէլ, կերթաս քա-
ղաքը կըտեսնես: Իմ քոյրն էնտեղ է մարդի
տուած, բայց ես չեմ տեսել . . .

— Եղ լաւ է: Իմ քոյրն էլ է էնտեղ:
Հօրըդ ասա, թող քեզ էլ բերի քաղաք: Ասում
են՝ քաղքի տղէքը շատ չար տղէք են, գեղացի
երեխանցը ծեծում են, մենք որ միասին լի-
նենք, մեզ ո՞վ կարող է ձեռը տալ: Արութիւն
ջան, արի ընկեր դառնանք, ես իմ օրումը քեզ
մտիցս չեմ գցիլ:

— Եղ շատ լաւասեցիր, Մանուէլ ջան, ես դեռ իմ օրումն ոչ մի ընկեր չեմ ունեցել. մեր գեղումը մենակ էի կարգում, էստեղ էլ մենակ եմ կարգում. սիրտս շատ է ուղեցել, որ մի ընկեր ունենամ, բայց չեմ ունեցել: Ո՛հ էր, եթէ Աստուած տայ, մենք միասին լինենք, ես ինչ որ գիտեմ, բոլորն էլ քեզ կը տօլրեցնեմ:

Ինչպէս Արութիւնի, նոյնպէս եւ Մանուէլի սրտի մէջ ընկերսիրութեան զգացմունքը սաստիկ վառ էր, բայց նրանց լեզուն դեռ եւս տկար էր այդ զգացմունքի յայտարարը լինելու համար: Նրանց երկար քնքուշ խօսակցութեան հետեւանքն այն եղաւ վերջապէս, որ բոլորովին վերացեալ հոգւով իրանց գըլխըններից մի մի մազ պոկեցին, եւ իրար հետ փաթաթելով՝ թաղեցին երեք-քարի տակին, առանց մի բան ասելու, բայց կարծես իւրաքանչիւրի սիրտը հետագայ խօսքերն էր բարբառում. «Մեր ընկերսիրութեան ուխտը սլիտի անխզելի մնայ մինչեւ այն օրը, երբ մեզ էլ այս փաթոյթի պէս կըթաղեն հողումը: Յետոյ վեր կացան եւ քայլեցին դէպի իրանց

գերդաստանը, երբ Արութիւնը սկսեց բնազդմամբ երգել հրեշտակային ձայնով Շնորհալու երգերից հետագայ տունը.

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր,
Բորբոքեսցի ի հոգիս մեր,
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ,
Զլոյս գիտութեան քո փայլեսցէ,
Ի քնոյ մահաւ զմեզ զարթուցէ,
Զմիտս բոցով քով վառեսցէ. . .





Բ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Րուսիանը ծը-
նուել է Թիֆ-
լիզի մօտա-
կայ Խաչէն
անուանեալ
գիւղումը:

Անցեալ դա-
րի վերջերից
սկսած մինչեւ

ներկայ դարու
սկզբները Ղարաբա-

ղից շատ հայեր գաղթեցին
դէպի ամեն կողմ, դրան-

ցից մէկ հատուած էլ Խաչէնու մհալից եկաւ
եւ Բօլնսու ձորումը հաստատեց իր բնակու-

թիւնը, որտեղից դարձեալ սկսեցին ցրուել.
մի քանի տուն միայն գնացին շէնացրին մի
հին գեղատեղ, եւ ի յիշատակ իրանց հայրե-
նիքի՝ Խաչէնու, նոր գիւղի անունը դրին Խա-
չէն: Մի կողմ դնելով սլաւմական ու աշխար-
հագրական նիւթը, որ մեր խօսակցութեան
թելը շատ չերկարանայ, մենք խօսինք միայն
այն անձանց վերայ, որոնք որ եւ իցէ կեր-
պով ազդեցութիւն են ունեցել Արուսիանի
կեանքի վերայ մինչեւ այն օրը, որ օր որ սլա-
ւահեցանք մենք նրան:

Արուսիանի մայրը՝ Հռիփսիմէն, որի տոհ-
մումը ժառանգական կերպով շարունակում
էր քահանայութիւնը, ցանկանում էր որ ինքն
էլ քահանայ որդի ունենայ: Այս իսկ սլաւ-
առուով Արուսիանի ծննդեան քառասունըք կա-
տարելուց յետոյ, երբ Հռիփսիմէն գնաց ժամ
նորածին մանկան համար կեանք մաղթելու,
Արուսիանի պորտն ամիսփեց եկեղեցու սլա-
տի մէջ եւ մի ջերմեռանդ աղօթքով նրա
կեանքի տնտեսութիւնը յանձնեց Աստծուն եւ
Նորա սուրբերին:

Փոքրիկ Թիւնին հինգ տարեկան դառած

չորառած՝ մայրը տաքաւ նրան եւ յանձնեց Տէր Առկասի աղջկանը՝ Մանիշակին, որ գրագիտութեան մէջ մի գիւղական տիրացուից պակաս չէր:

Արուսթիւնը հազար անգամ լսած լինելով իւր մօրից, որ նա գիր պիտի սովորի, կարծում էր, թէ այդ մի շատ քաղցր բան պէտք է լինի, ուստի ինքն եւս շտապում էր, որ մի օր առաջ վայելէր իր երազած չիր ու չամիչը:

Մեծ պասի առաջին երեք շաբթի օրը նա արդէն փափախը վերցրած եւ Մանիշակի առջեւ չորած՝ սովորում էր «Յանուն Հօրը» եւ «Խաչ, օգնեա՛ ինձ» ասելը: Այս դժուար չը թուաց Արուսթիւնին՝ առաջուց սովորած լինելով իւր մօրից, եւ ոչ այդ, բե՛ն, գիւմ ասելը դժուարացաւ, որ իր սուր յիշողութեան շնորհիւ խաղի պէս սովորել էր առանց նրանց պատկերը տեսնելու, բայց երբ որ Մանիշակը երկու մատի մէջ առաւ այս եւ այն գիրը եւ ստիպեց Արուսթիւնին, որ ճանաչէ, այս այնքան դժուար թուաց Արուսթիւնին եւ անհնարին մի բան, որ երբ գնաց տուն ճաշելու, էլ

չուզեց վերադառնալ դէպի այդ-բե՛նը: Այդ նկատեց մայրը եւ իսկոյն լուծիցը մի սամի հանեց, որ Արուսթիւնին մի լաւ խրատէ, բայց Արուսթիւնն աղաչեց մօրը, որ չըժեժէ:— Կերթամ, կերթամ, ասաց. Մանիշակը լաւ է քեզանից, նա ինձ չի ծեծիլ:

Եւ ճշմարիտ՝ այնուհետեւ էլ փախչելու մասին չըմտածեց Արուսթիւնը եւ հարկադրուեցաւ սովորել ամբողջ հեգարանը, որ երբ աւարտեց, Մանիշակը կապոտեց Արուսթիւնի ոտները եւ ապսպրեց Հռիփսիմէին, որ գայ իր որդու ոտներն արձակէ:

Հռիփսիմէին այդ սովորութիւնը ծանօթ լինելով՝ շտապեց իր որդու վարժուհու մօտ եւ խոստացաւ նրան մի ճոխ սեղան: Միւս օրը պատրաստեց իւղալի թխուածք, հալուա, հաւ, մրգեղէն ու գինի: Այդ բոլորը մի մեծ խոնջում դարսած՝ դրաւ ուսին, գաւով գինին էլ տուաւ Արուսթիւնի ձեռքը, տաքաւ Մանիշակին ու յայտնեց նրան իր անկեղծ շնորհակալութիւնը:

Մանիշակը շատ գովեց Արուսթիւնի սրամտութիւնը, խոստացաւ շուտով սովորեցնել ժա-

մագիրքը եւ գիր գրելը: Մանիշակն իր խօսքը կատարեց: Արութիւնը բոլոր ժամագիրքն աւարտեց, էլ մի հատ ալելուիա չըթողեց, բոլորն էլ անգիր արաւ, բայց Մանիշակը էլ չըկապտեց Արութիւնի ոտները, որովհետեւ էլ ուրիշ սովորեցնելու գիրք չունէր: Ժամագիրքն էլ ու գիտէ որ քունը ու պոռճախից էին դտել: Դա մի պապական ժառանգութիւն էր Հռիփ-սիմէի հօրանց տանը մնացած, մի քանի անգամ կազմած, մէջէմէջ պակասած տեղերը կազմարարների ձեռքով գրուած: Բայց Արութիւնի ձեռքումը բոլորովին քրքրուեցաւ եւ նա էլ տարաւ թաղեց մի տեղ, հաւատալով շատերի կատակով ասածին, թէ՝ «գիրքդ որ թաղես, նրանում ինչ որ կայ, կըլծաղուի մոքումդ, էլ յետ չի դուրս գալ» . . .

Զարմանալի պարզամիտ էր Արութիւնը: Նա ունէր շատ սուր յիշողութիւն, իր չըհասկացած երկար աղօթքներն ու սաղմոսները շատ հեշտութեամբ անգիր էր անում, նմանապէս եւ ամեն մի լսած խաղ, երգ, թէկուզ լինէր թուրքերէն, պարսկերէն, կամ զանազան լեզուների մի խառնուրդ, նրա համար

միեւնոյն էր, բառ առ բառ դասաւորւում էին նրա մոքումը. այսպէս եւ ամեն մի լսած առակ, հէքիաթ: Ինչպէս որ ունէր սուր յիշողութիւն, նոյնպէս ունէր եւ իւր յիշողութիւնն ամբարելու մի անկուշտ փափաք: Բայց գալով նրա դատողութեանը, նրա խելքին, շատ միամիտ էր: Իր հասակակից բոլոր երեխայքը նրանից խելօք էին. նրանք դատելու, հաւանելու, չըհաւանելու, ընտրելու, մերժելու յատկութիւն ունէին: Բայց պէտք է ասենք, որ Արութիւնի յիմարութիւնը մի բախտաւորութիւն էր եւ ոչ անբախտութիւն: Ուսումնատուութեան այդ բարբարոս եւ խաւար ժամանակը ոչ մի խելօք երեխայ գիր չէր սովորում, նրա խելքումը չէր մտնում, նրա խելքը հակառակում էր, թէեւ բնազդմամբ, որ այդ ձեռով սովորել անհնարին է: Այդ պատճառով այդ յիմար ձեւի տակ ընկճւում էին մէկ այն երեխաները, որոնք լինում էին դատողութիւնից զուրկ, խելճ եւ միամիտ, եւ մէկ էլ այն երեխաները, որոնք կարգէ դուրս յիշողութիւն էին ունենում:

Արութիւնը բախտաւոր էր եւ այն կող-

մից, որ նա չընկաւ կոպիտ խալիփաների ձեռք, այլ Մանիշակի, որ շատ քնքուշ մի էակ էր: Նա սիրեց Արութիւնին մօրից առաւել: Նշմարիտ է, Մանիշակի քնքշութիւնը Արութիւնին աւելի եւս քնքշացրեց եւ շինեց մի անմեղ գառն գայլերի մէջ, բայց եւ շատերի աչքն էր ընկնում նա իբրեւ մի անսովոր շնորհալի երեխայ:

Այսպէս երբ որ Արութիւնը տասը տարեկան էր արդէն, մէկ անգամ Շամշուղու նորընծայ տէր Պետրոս քահանան եկաւ Խաչէն եւ իջաւ Արութիւնի հօր՝ Աւետիքի մօտ: Տէր հայրը իւր ուսումն ստացել էր Սանահնի վանքումը, ուր նրա ժամանակ մի քանի գիտուն վարդապետներ կային: Սա տեսաւ Արութիւնին, տեսաւ նրա ժամասացութիւնը, գրաւարժութիւնը, ձայնի յաջողակութիւնը եւ շատ հաւանեց, համարելով նրան մի ինքնաբոյս ծաղիկ Խաչէնի անապատում: Ինքն իրան մի հանձարաւոր մանկավարժ կարծելով՝ Արութիւնի երեսի գծագրութիւնը համեմատեց Եփիմէրտէի դիմազննական բացատրութիւնների հետ ու եզրակացրեց, որ նա մի անսովոր ընդու-

նակութեան տէր տղայ պէտք է լինի, ուստի ինքն առաջարկեց Աւետիքին, որ Արութիւնի կրթութեան շարունակութիւնը իրան յանձնէ:

Աւետիքը ուրախութեամբ կատարեց տէր հօր առաջարկութիւնը, որովհետեւ իւր ծանօթ քահանաներից ամենից բարձր էր համարում նրան թէ վարք ու բարքի եւ թէ գիտութեան կողմից: Եւ այդպէս էլ էր: Հռիփսիմէի ուրախութեանն եւս չափ ու սահման չըկար, թէեւ մի կողմից նրա մայրական զգացմունքը՝ կարօտելու մասին՝ տրորվում էին:

Այսպէս ահա Արութիւնը մի նոր վարժապետ ունեցաւ, որի մօտ ստացաւ վանական ուսումն, Աստուածաշունչ, Շարական, Քրիստոնէական վարդապետութիւն, բերականութիւն: Իսկ ազատ կարդալու գրքերն էին՝ Հարանց վարք, Այսմաւուրք, Պղնձէ քաղաքի պատմութիւն, Եօթն իմաստասիրաց գիրքը, Տաթեւացու հատորները, եւ ուրիշ զանազան բարոյական բովանդակութիւն ունեցող գրքեր: Այսպէս լրացաւ երեք տարին, եւ տէր հայրն ասաց, որ էլ բան չի թողել, բոլորն էլ սովորեցրել է Արութիւնին: Եւ ճշմարիտ՝ տէր հայրը ծոյլ

չէր բան սովորեցնելումը: Նա ուզում էր մի լաւ աշակերտ թողնել իրանից յետոյ իբրեւ յիշատակ, եւ այդպէս էլ նայում էր Սրու-
թիւնի վերայ: Ոչ մի բան չէր ծածկում նրա-
նից եւ ամեն բան, ինչ որ գիտէր, սովորեցնում
էր: Նա գիտէր գերեզմանի քար գրել, կաղ-
մարարութիւն, այդ էլ սովորեցրեց Սրութիւնին:
Վերջը, երբ ամեն բան հատաւ, երբ սովորեց-
րել էր նաեւ մատնատումարը, ճիւղագրութիւն
անելու ձեւը, ինչ որ իւր կեանքումը մի հէ-
քիաթ, առակ, հանելուկ ու առած էր լսել,
բոլորն էլ ասել էր Սրութիւնին, այնուհետեւ
սկսեց մի այնպիսի բան սովորեցնել, որ ինքն
էլ պիտի նոր սովորէր. դա էր Ալբերտի Աս-
տուածաբանութիւնը, որ պիտի ըմբռնէր տաս-
ներեք տարեկան երեխան: Միայն Սրութիւնը
չէր, որ իբրեւ մանուկ, շատ միամիտ էր, նրա
վարժապետը, որ յիսուն տարեկան մարդ էր,
նրանից աւելի միամիտ էր:

Ալբերտի Աստուածաբանութեան սովո-
րելը պէտք է հիմնուէր մի շատ առաքինի
վարք ու բարքի վերայ եւ Սուրբ Կուսին
պէտք էր միջնորդ ունենալ, ինչպէս սկզբու-

մը մի ոտանաւորի մէջ ասում է. —

Նաեւ յաւէտ ազօթեսցես,

Զկոյսն միջնորդ քեզ արասցես

Ոչինչ շնորհ ինչ լիցի քեզ,

Թէ Կոյսն իցէ առ քեզ անտես,

այս պատճառով Սրութիւնի խաջ ու Աւետա-
րանը դարձաւ Աստուածածնի միակ պատկե-
րը, որի առջեւ ստէպ ստէպ ծունկ չօքելով
միշտ այս էր կրկնում. — «Դ՛ու, ո՛վ Տիրամայր,
դ՛ու, որ բթամիտ Ալբերտին տուել ես այն-
պիսի հիանալի շնորհք, ինձ էլ տուր» . . .
Սրութիւնի հոգին վերանում էր Աստուա-
ծածնի պատկերի առջեւ եւ նրա աչքերը լցնը-
վում արտասուքով: Նա չէր ուզում վեր կե-
նալ տեղիցը, մինչեւ չէր զգում մի յանկարծա-
կի տաքութիւն եւ աչքերի մթնումն:

Տեսնելով, որ Սրութիւնը շատ է ճնշում
իրան, մանաւանդ պահելով Ս. Կարապետի
պատը, որ նրան զարդարէր հիանալի շնորհ-
քով, հետզհետէ նուազում է եւ կորցնում
առողջութիւնը, տէր հայրը ազատեց նրան
Ալբերտի ձեռից եւ թող տուաւ, որ ազատ
ման գայ, խաղայ, որքան կամենում է: Բայց

մտածողութիւնն արդէն սկսել էր ներս
սողալ Արութիւնի ռաբիդի մէջ: Նա իւր ազատ ժա-
մանակը, ծառերի տակ, զովարար ստուերներում
նստած, քարոզներ էր գրում, կամ ոտանաւորներ
հիւսում, որ տեսնէ, թէ Ս. Կարապետը կամ
Աստուածածինը որքան շնորհք են աւելացրել...

Այսպէս՝ թէպէտ տէր հայրը այլեւս չէր
դաս տալիս Արութիւնին, բայց երբ որ գիւղի
քէթխուղաները՝ պարապութիւնից՝ հաւաքվում
եին տէրտէրի մօտ զրոյց անելու, տէր հայրը
այդ ժամանակ կանչում էր Արութիւնին եւ
հարցնում արդէն սովորած դասերից:

Այսպէս տէր հայրը մի քանի բառ հոլո-
վել ու մի քանի բայ խոնարհել տալուց յետոյ՝
հարցնում էր Արութիւնին—

— Ի՞նչ կընշանակէ բառս՝ վարունգ.

— Խիար, պատասխանում էր Արութիւնը:

— Խարբուղակին գրաբառ ի՞նչ կասեն.

— Սեխ:

— Զմերուկի՞ն.

— Մեղրապոպ:

— Ըստ մասանց բանի զի՞նչ է բառս՝
«յուշկապարիկ».

— Է անուն, պատասխանում է Արու-
թիւնը, բայց քէթխուղէքն ուզում են իմա-
նալ, թէ ի՞նչ ասել է «յուշկապարիկ». ընդ-
հատում են տէրտէրի հարցաքննութիւնը եւ
խնդրում են, որ նա առաջ մէկ բացատրէ այդ-
բառի ստուգաբանութիւնը: Տէր հայրն իսկոյն
նոյն բառի նշանակութիւնը հարցնում է Ա-
րութիւնին, որով ուզում է ցոյց տալ, թէ
այն, ինչ որ իրանից են ուզում իմանալ, իր
աշակերտն էլ գիտէ:

— Ի՞նչ ասել է «յուշկապարիկ», Արութիւն.

— «Յուշկապարիկ» են ասվում այն կեն-
դանիքը, որոնք կիսից վեր ուրիշ կենդանի
են, կիսից վայր՝ ուրիշ: Օրինակ՝ կան այնպէս
կենդանիք, որոնք գօտկից վերեւ կնկայ նը-
ման են, իսկ գօտկից ներքեւ՝ ձկան, թըռ-
չունի, իշի եւայլն:

Այս բացատրութիւնը լսելով քէթխուղա-
ներից շատերը զարմանում էին, իսկ աւելի
ծերերը այդպէս բաներ շատ լսած լինելով
շատ չէին զարմանում եւ ասում էին.

— Աշխարհքումն ինչ ասես, թէ չըկայ.
ասած է՝ «Շատ ապրողը չի շատ բան գիտե-

նալ, շատ ման եկողը կըգիտենայ»։ Մէկ անգամ մի մղդըսի էր եկել մեր գեղը, էլ աշխարհք չէր թողել, չիմ էլ ման էր եկել. Հնդստան, Արաբստան, Հաբէշստան, Չինմաչին, Փռանդստան. . . մի խօսքով էլ աշխարհք չէր թողել, չիմ էլ ոտի տակն էր տուել։ Ի՞նչ ասես՝ թէ նրա գլխովը չէր անց կացել։ Ե՛ն բաներն էր պատմում, որ լսելիս մարդի մազեր փշաքաղվում էին։ Ասում էր մի աշխարհք ընկայ, էնտեղի մարդիքը շների նման էին . . .

— Էդ ճշմարիտ է. «շնագլուխների» աշխարհքն է եղել, ասաց տէր հայրը։

— Տէրտէր ջան, քու կարգին մեռնեմ, նա մղդըսի մարդ էր, Երուսաղէմի լուսը տեսած, մեռնեմ զօրութիւնին, սուտ ի՞նչպէս կասէր։ Ասում էր մի աշխարհք ընկայ, էնտեղի մարդիքը հատ աչքանի էին։

— Ճշմարիտ է, հաստատեց տէր հայրը, նրանց կասեն «Քեալլա-գեօզ», «Թափա-գեօզ» որ կընշանակէ «ձակատ-աչք, որովհետեւ ունեցածները մի աչք է, էնէլ ձակատի մէջ տեղը։

— Ասում էր՝ «Մի աշխարհք ընկայ, էն-

տեղի մարդոց հասակը մի թիզ էր . . .

— Ճշմարիտ է, դա ասվում է «Թղկաց աշխարհ» . . .

— Ես ի՞նչ գիտեմ, էնքան բաներ էր ասում, որ ես ո՞ր մէկն ասեմ. . . Հաբան. մենք ի՞նչ ենք տեսնում էս ձորի միջին։ Ուսում էլա չունինք, որ բան գիտենանք. հիմի մենք էդ երեխի չափ բան չենք գիտում. . . Ա՛յ, մեր տէրտէրը, ճշմարիտ է, շատ տեղեր չի ման եկած, բայց գետնքի տակ ու գլուխը գիտէ. ինչո՞ւ, որովհետեւ ինչ ասես գրքերումը գրուած է. . .

Տէր հայրը շարունակում էր իւր հարցաքննութիւնը։ Հարցնում էր Աստուածաբանութիւնից եւ ուրիշ դասերից, Արութիւնն էլ համարձակ պատասխանում էր եւ զարմացնում քէթխուղաներին։

— Սա կամ իր մուրազին չի հասնիլ, կամ թէ որ ապրեց, տէրտէրիցն անց է կենալու . . . զարմանք բան է, էսքան պըստիկ տղէն էլ էսքան բան կը գիտենայ, ասում էին, քէթխուղաները իրար մէջ Արութիւնի քամակին։

Տէրտէրակինը, որ շատ անգամ իր ականջով լսում էր այդ խօսքերը, նեղանալով տէրտէրի վերայ, ասում էր նրան.

— Էս գեղըցիք չլտես են, երեխին աչքով կուտեն. պառաւ Գէվոյի աչքը քար կը պատռի. դրանց մօտ ո՛ւր ես բան հարցնում. . .

Թէպէտ տէր հայրն եւս հաւատում էր այդպիսի նախապաշարմունքների, բայն «կնկայ խօսքին չըլսելու» նախապաշարմունքը աւելի զօրեղ լինելով նրա մէջ, շարունակում էր իր հարցաքննութիւնները, մանաւանդ որ դրանով իր անունն ու պատիւը աւելի եւս բարձրանում էր եւ հաստատւում ժողովրդի կարծիքը, թէ նրան յայտնի է գետնքի տակ ու գլուխը:

Պէտք է ասել, որ Տէր Պետրոսը որքան որ յարգելի եւ պատկառելի էր ժողովրդի աչքում իբրեւ գիտնական, մի նոյնքան եւ առաւել եւս նա սիրելի էր դարձել իր անընդասիրութիւնովը: Նա սովորութիւն չունէր նայելու, թէ ինչ են տալիս իրան: Զրտուած ժամանակն եւս դարձեալ ոչինչ չէր խօսում: Շատ չքաւոր էր, բայց իր չքաւորութիւնից դար-

ձեալ բաժին էր հանում կարօտեալներին եւ ինքը ցամաք հացով էր բաւականանում: Նրա հաւատի պարզութիւնը միացել էր անարատ եւ անխախտ, եթէ միայն կարելի է հաւատ անուանել սնահաւատութիւնը: Նա անխտիր հաւատում էր ամեն գրուած եւ տպուած գրքի, ամեն մի պառաւական խօսքի, ամեն մի յիմար նախապաշարմունքի: Նա մի ժամանակ պարապում էր «Սողոմոնի» ասուած թալիսմանագրով, ինչպէս եւ իր ժամանակի բոլոր գիտնական համարուած վարդապետներն ու տէրտէրները, թէեւ ծածկաբար: Այս հանգամանքը ոչ միայն չէր պակասեցնում տէրտէրի պատիւը, այլ ընդհակառակն նրան աւելի եւս բարձրացնում եւ դասաւորում էր աստղաբաշխների կարգումը: Այս բանը յայտնի եղաւ Արութիւնին բոլորովին դիպուածաբար:

Մէկ օր Արութիւնը տէրտէրի առջեւ չորքած դաս էր առնում Ալբերտի Աստուածաբանութիւնը: Խնդիրը Աստուծոյ էութեան եւ Երրորդութեան մասին էր. խօսքերը խրթին, միտքն անըմբռնելի: Արութիւնի աչքերը մըթնեցան ու նա վայր ընկաւ նուաղած: Սառը

ջուր Խծեցին Արուժիւնի վերայ եւ ուշքի բերին: Այս դիպուածից մի քանի ժամ չանցած՝ տէր Հայրը բաց արաւ մի Հին սնդուկ եւ նրա միջից հանեց մի մեծ կապոց ձեռագրեր: Տէր Պետրոսը ծանօթացրեց Արուժիւնին այս նոր մատենադարանի հետ: Զոկ ջոկ տեսարակներ էին գոյնգոյն մելանով գրուած վերնագրերով — «գիր յոպոպի», «գիր համասիրիւ ծաղկի», «գիր հաւախօսի», «գիր չբերք կնոջ» եւ այլ մանր մունր գրքեր, իսկ մի մեծ հատորի վերայ գրած էր «գիր Սողոմոնի» . . .

Արուժիւնը լսած լինելով այս գրքերի մասին, թէ «ո՛վ որ ունենայ, նա ինչ որ ուզենայ աշխարհիս երեսին՝ կանէ», նրա երեսի գոյնը թուաւ սաստիկ ուրախութիւնիցը, թէ այժմ պիտի ստանայ այն վերին գիտութիւնը, որ էլ ոչ մի հոգեղէն չը պիտի կարողանայ իրան հասնել . . .

Միւս օրը՝ դեռ արեգակը չըծագած՝ տէր Հայրը հրամայեց Արուժիւնին, որ յիշեալ մեծ հատորը վեր առնէ երթայ այգին, ինքն էլ շուտով կերթայ: Արուժիւնն ստանալով իւր ցանկալի առարկան, մինչեւ այգին մի շնչում

վազեց, որ մի րոպէ առաջ տեսնէր, թէ ինչ կայ, ինչ չկայ նրա մէջ: Նա դեռ եւս իր հետաքրքրութիւնը կէս մի ջրջուցած՝ տէրտէրը հասաւ երկէն տէրողորմեան ձեռքն առած:

Արուժիւն, որդի, դու որ «անար» ես ունեցել, ինչո՞ւ մինչեւ Հիմա ինձ չես ասել: Այս ասելուց յետոյ տէր Հայրը բացեց գիրքը, կարդաց մի խրատ՝ թէ ժամի քանիսի՞ն պէտք է գիր անել, եւ նախ եւ առաջ մի ժամացոյց շինեց: Թղթից մի շրջանակ կտրեց եւ քսանըջորս հաւասար բաժին արաւ, իւրաքանչիւր բաժնի վերայ մի թուանշան դնելով: Նրջանակի մէջ տեղը ցրեց մի շիւղ եւ սպասեց արեգակի ծագելուն, որ ծագեց թէ չէ՝ թուլթըն այնպէս յարմարացրեց, որ շիւղի ստուերն ընկաւ 1 թուանշանի վերայ: Այդ արդէն կընշանակէր, որ ժամի մէկն է առաւօտեան: Գիրը պէտք է անէր ժամի երկուսից սկսած: Արեգակը քիչ քիչ բարձրանալով՝ շիւղի ստուերը հասցրեց 2 թուանշանին: Իսկ տէրտէրը մինչեւ այդ ախտարք էր անում, որ գտնէ Արուժիւնի աստղը:

—Մօրըդ անուան ինչ է, հարցրեց տէր հայրը:

—Հռիփսիմէ, պատասխանեց Արուսթիւնը:

—Հոն՝ երեք, ռան՝ մէկ, ինչին՝ ութ, փիւրը՝ չրկայ, սէն՝ չորս. . . այսպէս համբելով եւ տէրողորմեան գցելով՝ ախտարք արաւ տէր տէրը, այսինքն մօր եւ որդու անունների տառերի թուերը գրքի աղիւսակի մէջ նշանակած թուերի համեմատ հաշուեց, բոլոր գումարը եղաւ քսանինը: Այդ քսանինից տասներկու տասներկու դուրս գալով, տեղը մնաց հինգ, որ ասել է Արուսթիւնի աստղը հինգերորդ կենդանակերպն էր, որ էր Առիւծը: Բացեց Առիւծը, որ տեսնէ, թէ այդ կենդանակերպի տակ ծնուած մարդի ցաւին ինչ դեղ է ասել դեւը Սողոմոնին: Չարը պատասխանել էր Սողոմոնի հարցին այսպէս. — Եթէ այս ինչ երեք թիկիսիմները գրուին սեւ հաւի կամ աննշան սեւ ոչխարի արիւնով, մէկով լուացուի հիւանդը, միւսով ծուխ տայ իրան, եւ երրորդը կարել տայ իր աջ բազուկին, այնուհետեւ նա կառողջանայ եւ նրան այլ եւս ոչ մի վնաս չի տալ դեւը:

Չար դեւի բարի խորհուրդը կատարելուց յետոյ տէր հայրն սկսեց սովրեցնել Արուսթիւնին այն ամեն գաղտնիքները, որ պարունակվում էին այդ գրքի մէջ եւ պատմեց իր արած փորձերի մասին: Նա ասում էր, թէ եղել է մի Յակօբ անունով պատրիարք, որ շատ լաւ է իմանալիս եղել ոչ միայն Սողոմոնի, այլեւ «Վեցհաղարեան» ասուած թալիսմանագրի գործ դնելը, որով երես առ երես յարաբերութիւն է ունենում չարերի հետ: Նա պատմում էր, որ իր վարժապետներից մինը եւս՝ Գիրսաս անունով՝ նրանից յետ չէ, որ վարդապետ մարդ լինելով, ուրեմն եւ հարուստ, թանգ գնով ձեռք է բերում այն ամեն հատերն ու դեղերը, որ դիւթշութեան համար կարեւոր են, որ եթէ մօտ քաղաքներում չեն գտնվում, նա բերել է տալիս Ստամբօլից, Հնդստանից եւ ուրիշ հեռաւոր տեղերից: Տէր հայրը յայտնում էր, որ հոգեւորականներին արգելուած է այդպէս բաներով պարապելը, բայց նա չէր ասում, որ այդ արգելելու պատճառն այն է, որ այդպէս բաները ստույգութիւն են միանգամայն եւ խաբեբայու-

Թիւն, այլ թէ քրիստոնեաներին փրկելու համար, սուրբեր կան, խաչեր կան եւ թէ ուր որ սատանայի զօրութիւնովը կրփրկէ մարդու, նա գերի կընկնի այն սատանայի ձեռքը, որ երախտահաս է եղել նրան:—Բայց այս էլ կայ, աւելացնում էր տէրտէրը, որ եթէ գժերի եւ հիւանդների կըլաւացնես, էդ մեղք չէ, վարձք է, բայց եթէ «չիլա» կըմտնես, չարերի հետ պայման կանես, որ ինչ հրամայես, ասածդ կատարեն, եւ այնուհետեւ դու էլ սխես սիրոյ գրեր անես, կնանիք մերկացնես, մարդիկ գժուացնես, երկինքը կապես, ահա այդ ժամանակը հոգիդ կընկնի նրանց ձեռքը. . . Բայց ինչ ուզում է լինի, գիտենալը մեղք չէ, անեղն է մեղք: Միայն ինչ որ անես, պէտք է թաքուն անես, որ չիմանան, եթէ ոչ էլ տէրտէր չեն օրհնիլ, ինչպէս որ ինձ չէին օրհնում. . .

Յիրաւի, Ներսէս կաթողիկոսն արգելել էր հոգեւորականներին կախարդական գրքերի գործադրութիւնը, հաւաքել էր տալիս այդ գրքերը եւ տէրերին պատժում, բայց հաւաքող վարդապետները կամ գործակալները շատ անգամ իրանք էին սեփականում այդ գրքերը՝

հաւատալով նրանց հրաշքներին: Չէին ասում «սուտ է», այլ թէ «մեղք է»: Մեր եկեղեցին նդովում է այդ գործով պարապողներին, իբրեւ չարագործների, բայց ոչ իբրեւ խաբեւիաների, եւ խաբուածների, որովհետեւ սատանայի գոյութիւնն ընդունելուց յետոյ կարող չէ չընդունել եւ նրա չարագործութիւնը. . .

Արութիւնը, որ անյագ սիրով հաւատ էր ընծայում Տէր Պետրոսի բոլոր ասածներին, աշխատում էր, որ ինչ գիտէ, չըգիտէ տէրտէրը, բոլորն էլ ամբարէ իր յիշողութեան մէջ: «Գիտենալը խօս մեղք չէ, անեղն է մեղք», կրկնում էր Արութիւնը տէրտէրի ասածը եւ միշտ հարցնում էր տէրտէրին այն բաների մասին, որոնք շարժում էին նրա հետաքրքրութիւնը: Սակայն ոչ մի անգամ չէր պատահում, որ տէրտէրն ասէր, որ այդ բանի մասին տեղեկութիւն չունի ինքը: Նա ամեն բան գիտէր, այսինքն հաւատացած էր, որ գիտէ: Եթէ՝ օրինակ՝ Արութիւնը հարցնում էր երկնային մարմինների մասին, արեգակի, լուսնի, աստղերի, տէր հայրը պատասխանում էր, որովհետեւ Գրիգոր Լուսաւորիչը եւ Բար-

սեղ Կեսարացին մի հարց ու պատասխանով
ուծել էին այդ խնդիրը: Եթէ խնդիրը վե-
րաբերում էր այն կեանքին, այդ աւելի պարզ
էր տէրտէրի համար, քան թէ այս կեանքը.
«արդարոց կեանք յաւիտենական, եւ մեղաւո-
րաց տանջանք յաւիտենական»: Այսպիսով ահա
Արուսթիւնը տէրտէրի բոլոր փիլիսոփայութիւնը
սովորեց եւ ինքն էլ դարձաւ մի փոքրիկ փի-
լիսոփայ, մեծ բաներ գիտցող, փոքրիկ բանե-
րին անտեղեակ: Հայոց պատմագիրներին ծա-
նօթ չէր տէր հայրը, նա չէր տեսել եւ ոչ
կարդացել Խորենացի, Եղիշէ, Փարպեցի Եղնիկ,
Դաւիթ, Եւայն, այդ պատճառով՝ սող, Հայ,
հայրենիք, Հայաստան բառերը Արուսթիւնի ա-
կանջին չըդիպան ոչ մէկ օր: Խօսք էր լինում
միայն Հայոց կրօնի մասին, եւ տէրտէրն ա-
սում էր՝ «աշխարհիս երեսին միակ ճշմարիտ
կրօնը Հայոց կրօնն է, բայց հայերն իրանք
անմիաբան ազգ են, դրա համար էլ կորցրել
են իրանց թագաւորութիւնը: Հայոց թագա-
ւորները շատ գոռոզ են եղել, շատ ամբար-
տաւան, ձիով են եղել գնալիս եկեղեցի: Անի
քաղաքացիք էնքան գոռոզացել են, որ ծաղ-

րում են եղել բոլոր վարդապետներին: Ասում
են՝ եթէ գալիս էր մի երկայնահասակ վար-
դապետ, նրա առջեւ դնում էին շատ ցածր
գրքակալ, որ վարդապետը կռանայ, եւ իրանք
ծիծաղեն, իսկ եթէ կարճահասակ էր լինում,
բարձր գրքակալ էին դնում, որ վարդապետը
վեր վեր ձգուի: Մէկ անգամ էլ ահա էդ
վարդապետներից մինը անիծեց ու քաղաքը
քանդուեց իսկոյն երկրաշարժով: Հիմա էդ
քաղաքը կայ, բայց ոչ ոք չի կարող բնակիլ
այնտեղ, որովհետեւ «անիծուած է» . . .

—Ափս՜ս, ասում էր Արուսթիւնը, սաստիկ
բարկանալով անբարտաւանութիւն անողների
վերայ եւ ընկնում էր մի խորին եւ անբա-
ցատրելի տխրութեան մէջ:





Գ.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ըբ որ Արութիւնը գնաս-բա-
րով ասաց Մանուէլին եւ
Հեռացաւ, այնուհետեւ սկսեց
երեւակայել մի բոլորովին ի-
րան անծանօթ աշխարհ: Նա
գիշերը երազումը տեսնում
էր, որ իբր թէ քաղաքումն
է, ման է գալիս նրանում, որ Մանուէլին
գտնի, տեսնում էր նրան իրանից Հեռու կանգ-
նած, կանչում էր, բայց Մանուէլը չէր լսում:
սկսում էր բարձր բղաւել, եւ իր ձայնն ինքը
լսելով՝ զարթնում էր եւ ավսոսում, որ զրո-
կուեցաւ Մանուէլի տեսութիւնից: Շուտով
աչքերը խփում էր, որ էլի պատահէ Մանուէ-

լին, բայց՝ իր ցանկութեան հակառակ՝ պա-
տահում էր օձերի, վիշապների, որոնցից սաս-
տիկ վախենալով՝ սկսում էր փախչիլ, բայց
օձերը նրա չորս կողմը կտրում էին, նա մը-
նում էր շփոթուած, ուզում էր թռչիլ դէպի
վեր եւ թռչում էր թռչունի պէս: Թռչում
էր Արութիւնը եւ սկսում էր բարձրից ծիծա-
ղել օձերի վերայ եւ նրանց գլխին օփսուէն
կարդալ, որ սովորել էր տէր-հօրից: Այսպէս
լողալով օդի մէջ, իջնում էր Արութիւնը մի
բլուրի կամ բարձր քարի վերայ, բայց խսկոյն
զարթնում էր եւ ավսոսում, որ զրկուեցաւ
թռչելուց:— Ինչո՞ւ, ասում էր, դէպի քաղաք
չէի թռչում: Դարձեալ աչքերը խփում էր, որ
երազի մէջ թռչի դէպի քաղաք, բայց սրա
հակառակ, իր գրքերի մէջ գտնում էր զա-
նազան ձեռագիր մատեաններ, որոնց մէջ
գրուած էին լինում փակագրերով արձանա-
գրութիւններ, խրթին շարադրութիւններ,
զարհուրելի ճիւղաղական պատկերներ, թալիս-
մաններ, անըմբռնելի աղօթքներ. չարչարուելով,
տանջուելով կարգում էր, բայց ոչ մի բառ
կարդացածիցը չէր հասկանում: սաստիկ նե-

ղանալուցը յանկարծ զարթնում էր եւ տեսնում,
որ շատ քրտնել է: Յիշում էր իր երազը, բայց
ոչ մի բառ կարդացածիցը միտը չէր ընկնում:

Այսպէս մի քանի ամիս անցած՝ տէր Հայ-
րը մի երեկոյ յայտնեց Արուսիւնին, թէ վաղը
առաւօտուն պիտի երթայ քաղաք, եւ նրան
էլ ուզում է հետը տանել, ցոյց տալ քաղաքը:

Արուսիւնի երեսի գոյնը թռաւ սաստիկ
ուրախանալուցը, եւ մի քանի ընկեր ունէ՛ չը
խօսեց, կարծելով թէ երազումն է լսում այն
խօսքերը: Ել ընթրիք անել չըկարողացաւ. ու-
րախութիւնը հացի տեղ բռնեց, բայց վերա-
հաս գիշերը տարի դարձաւ Արուսիւնի հա-
մար, նրա քունը երկինք փախաւ:

Վերջապէս լուսացաւ, Տէր Պետրոսը հե-
ծաւ ձին, Արուսիւնին էլ առաւ գաւակը, եւ
մի քաղցր խօսակցութիւնով վարժապետ ու
աշակերտ ճանապարհ ընկան դէպի Թիֆլիս:

— Տէրտէր... (Բան է ուզում հարցնել
Արուսիւնը):

— Ի՞նչ է, որդի... լանդու լանդու մի
անիլ, թամբը կըծուես, ձիու մէջքին կըդիպէ:

— Չէ՛, ես շիտակ եմ նստած:

— Ի՞նչ է՛իր ուզում ասել:

— Էն օրը Դարդանց Օսէփը մի բան հար-
ցրեց, չիմացայ թէ պատասխան էի տուել,
շատ ամաչեցի:

— Ի՞նչ հարցրեց:

— Հարցրեց, թէ «դժոխքումը քանի հոգի
կան». ասացի՝ չըգիտեմ. . .

— Եդ ի՞նչ բան է, որ չես գիտացել.
մի՞թէ ես չեմ ասել քեզ:

— Ո՛չ, դու ինձ չես ասել, եւ ոչ էլ կար-
դացել եմ:

— Եդ ես էլ չեմ կարդացել, որդի. ամեն
բան որ գրէին, ոչ թուղթ հերիք կանէր, ոչ
թանաք: Ականջ արա, ես քեզ ասեմ: Երբ որ
Քրիստոս Հոգւովն ի դժոխս իջաւ, բոլոր հո-
գիքն աղատեց, միայն թողեց չորսը, — Կայէնին,
Յուդային, Սողոմոնին ու Անակին: Գրիգոր
Լուսաւորիչը որ ձեռքը Քրիստոսին տուած՝
դժոխքի դռնովը դուրս էր գալիս, յետ մտիկ
տուաւ: Քրիստոս իմացաւ, որ Գրիգորն իր
հօր համար է մտիկ տալիս. — Հը՞, ասեց,
մեղքդ է գալի՞ս. թող քո խաթրու դժոխքի
սիւնը ականջիցը հանեն, աչքումը դնեն: Էն-

պէս էլ արին, նա մնաց էնտեղ: Գրիգոր Լուսաւորիչը չըկարաց իր հօրն ազատել դժ-
ժոխքիցը: Բայց Սողոմոնն իր իմաստութիւնը
դժոխքումն էլ բանեցրեց: Երբ որ տեսաւ, թէ
Քրիստոս նրան թողեց էնտեղ, սկսեց գլուխը
քաշ քցած յետ ու առաջ անց ու դարձ անել
դժոխքումը սաստիկ բարկացած. . . Սատա-
նէքը, որ Քրիստոսի ներս մտնելիս փախել էին,
Նրա գնալուց յետոյ էլ յետ թափուեցան դժ-
ժոխքը. դրանք որ Սողոմոնին տեսան, մնա-
ցին զարմացած, թէ սա ինչո՞ւ է մնացել այս-
տեղ, բարի բանի համար չի լինիլ, երեւի Քրիս-
տոսի պակաս թողածը սա է ուզում լրացնել:
Յետոյ մօտենալով Սողոմոնին, հարցրին. — Է՛յ,
ուստա Սողոմոն, էստեղ ի՞նչ ես շինում, էդ
ի՞նչ ես չափում չափչփում, մոքիդ խորն ընկած:

— Զեզ համար գերեզմանատեղ եմ չա-
փում, պատասխանում է Սողոմոնը: Քրիստոս
ինձ հրամայեց, որ այս դժոխքի տեղը մի մեծ
տաճար շինեմ, իմ Նրուսաղէմում շինած տա-
ճարիս ձեւով, այն զանազանութիւնով միայն,
որ այս տաճարը իր հիմքի տակ պիտի ունե-
նայ մի կամարակապ խոր անդունդ, ուր պիտի

ամփոփեմ ձեզ, որ այնտեղ մնաք յաւիտեան եւ էլ
լոյս աշխարհք չըտեսնէք: Սատանէքն ասում են՝

— Ի՞նչ ես ասում, Սողոմոն, այդ ի՞նչ
անգութ մարդ ես դու. աշխարհի վերայ մեզ
քի՛չ տանջեցիր, հիմա էլ էստե՞ղ ես ուզում
տանջել: Ո՛չ, այդ քեզ չի յաջողիլ, այս մեր
բնակարանն է. . . եկէք, եկէք, Ուրիէլ, Սա-
ղայէլ, Դակուէլ. . . բոլոր դեւերն իմաց են
տալիս մէկ մէկու, հաւաքվում են եւ Սողոմո-
նին ցիմ ցիմ վեր են կաշնում, դժոխքիցը
հանում ու զնում դրախտի ճանապարհի վե-
րայ: Այսպէս գնաց Սողոմոնը, որ դրախտն
ընկնի, ճանապարհին՝ Զիթենեաց սարի տակով
անց կենալիս՝ վերեւ մտիկ տուաւ, տեսաւ Ա-
դամին՝ Քրիստոսի կողքին նստած: Սողոմոնը
Ադամին որ տեսաւ, ասեց՝ «Օրհնեա՛ տէր».
Ադամն էլ իր ձեռքը Քրիստոսի կուրծքին
դնելով՝ ասեց՝ «Աստուած օրհնէ» . . . Քրիս-
տոս էլ Սողոմոնի իմաստութիւնը գովեց, թէ՛
«Ես ինքս գիտէի, որ դու դժոխքումը կենող
պտուղ չես» . . . Ահա էսպէս, հիմա իմացար:

— Իմացայ, իմացայ. . . Ես հիմա երկու
բան սովորեցի. մէկ՝ թէ դժոխքումը քանի

հոգի կան, մէկ էլ որ թէ «օրհնեա տէրն ու Աստուած օրհնէն» ինչ ժամանակից է մնացել եւ ով է եղել դրա առաջին ասողը. . . Հիմա ես ամեն բան էլ գիտեմ, մնացել են էն բաները միայն, որ գրքերումը չըկան:

— Չէ, որդի, էլի շատ գրքեր կան, որ դու դեռ չես տեսել. . . ձարտասանութիւն, տրամաբանութիւն, Սաղմոսի մեկնութիւն, էլի ուրիշ հազար ու մէկ մեկնութիւններ կան: Ես չունիմ էդ գրքերը, թէ չէ ես ինքս կըսովրեցնէի: Բայց էլ ինչի՞դ է պէտք, որդի, շատ կարդալը. չես լսել, որ ասում են՝

Հաստ ու բարակն է մի գին,

Վայ գայ բարակ մանողին. . .

Տէր Կիրակոսի տղին ճանաչում ես, էն խոզարածին, — ինչ խոզարած, բռի արջ է: — Մի դարտակ «եւ եւս խաղաղութեան» է սովորել, ուղում է տէրտէր դառնալ: Ինձ խնդրում են, որ գործակալին յայտնեմ, որ գնայ առաջնորդին բարեխօս ըլի: Հիմի էլ հէնց նրա համար եմ գնում: Եկան հայր ու որդի, աղաջանք արին, ես էլ չըկարողացայ «չէ» ասել. . . Ե՛հ, իմ ինչի՞ս է հարկաւոր, մեղքն օրհնողի

շնըին. . . Բայց ես մնացել եմ զարմացած: Ասում եմ՝ «Եկեղեցու եօթը խորհուրդը գիտե՞ս». ասում է՝ «չէ». «շարական ասել գիտես», — «չէ». կարդալ, գրել, Տօնացոյցի մտիկ տալ. — չէ: Օրհնուած, ասում եմ, էլ ուրեմն դու ի՞նչպէս պէտք է քահանայութիւն անես: — Ես ի՞նչ անեմ, ասում է, հայրս ինձ ստիպում է, թէ պիտի տէրտէր դառնաս, որ իմ տեղը քեզ մնայ. չե՞ս կարող, ասում է, սաղը կնքել, մեռածը թաղել. էդ ես յետոյ էլ կըսովրեցնեմ, մի տասը թուման է առաջնորդի փանը, ի՞նչ կասի, որ չի ձեռնադրիլ. «կաշառքը դրախտի դուռը բաց կանի» . . .

Մէկ ասող ըլի դրան, թէ դու ինքդ ինչ գիտես, որ դրան ի՞նչ սովորեցնես: Աղօթքներն ու մաղթանքները բոլորը կիսատ է թողում, տիրացուի կողքին բռնում, որ շուտով քարոզն ասի: Աւետարան կարդալիս մի գլուխ հաղում ու նմամնջնում է, ոչ մի բառ ամբողջ չի դուրս թողնում բերնիցը, տառերի մեծ մասը կուլ է տալիս: Դրանց եկեղեցու շարականի մեծ մասին դեռ ձեռք չի տուած. յարութեան օրերին ապաշխարութեան շարա-

կան է ասում: Բայց ինչպէս թանգ է ծախում իր տէրտէրութիւնը, ամեն մի ծէս կատարելիս փողն էս գլխիցն է առնում, էն էլ մէկն երկուսով. ում ուզում է՝ հաս է գրում, ում ուզում է՝ չըհաս. . . Ձէ, դա անիրաւութիւն շատ է անում, դրա համար քահանայութիւնը մի սուրբ պաշտօն չէ, այլ մի տեսակ չարչուութիւն: Ես գործակալի պաշտօնակատար եմ, որ ուզենամ, դրան պատժել կըտամ, բայց ինչիս է պէտք, մենակ դա չէ էդպէս, բոլորն էլ էդպէս են. մեղաւորը դրանց ձեռնադրողներն են. . . Հաբա, որդի, էսպէս բաներ էլ կան աշխարհքիս վերայ, Աստուած պահի, կըմեծանաս, շատ բան կըտեսնես. . .

—Ես որ տէրտէր դառնալու լինիմ, մինչեւ ամեն բան լաւ չըգիտենամ, չեմ դառնալ:

—Որդի, մարդս պէտք է բնական ուսում ունենայ, շատ կարգալով ոչինչ չի սովորիլ: Տես՝ ինչքան մարգարէք են եղել, ինչքան առաքեալներ են եղել, նրանցից ոչ մէկն ուսում չի առել, բայց Աստուած տուել է նրանց շնորհք, իմաստութիւն, լեզուագիտութիւն. . .

—Բայց մէկ անգամ դու չասեցիր, տէրտէր, թէ մարգարէքն ու առաքեալները որ կան, Աստուծու աշակերտներն են, Նրա ընտրածները, բայց մենք հասարակ հողեղէններս պէտք է հողեղէններից բան սովորենք, պէտք է աշխատենք. . . Ես ինչքան պաս եմ պահում, աղօթք եմ անում, բայց որ չեմ սովորում դասս, ինքն իրան անգիր չի լինում: Ծշմարիտ է, շատ գիշերներ երազումս կարդում եմ զանազան գրքեր, շարագրութիւններ, բայց միտս չեն մնում:

—Ես էնպէս ասել եմ, որ դու աշխատես, չըծուլանաս, խօսք էր, բերանս եկաւ, ես էլ ասացի. բայց դու հաւատա, որ եթէ մէկը Աստուծոյ տուած խելքիցը զուրկ լինի, նա ինչքան էլ ուսում առնի, ոչինչ չի դառնալ: Հիմա տես, դու սիրում ես ուսում առնելը, էդ սէրն Աստուած է գցել քո մէջ. բայց էնպէսները կան, որ ուսման սէր չունին, զօռով ստիպում են նրանց, որ մի բան սովորեն: Բայց դու ուզում ես, այնպէս չէ՞, դու ուզում ես շատ ուսում առնես, շատ բան գիտեսնաս. . .

—Երբ որ ասում ես, դեռ էլի շատ բան

կայ, որ ես չեմ կարգացել, ինչի՞ չըկարգամ . .

— Շատ լաւ, հիմի գնում ենք քաղաք, եթէ կուզես, ես քեզ կըթողեմ էնտեղ, որ մտնես ուսումնարան եւ շատ բան սովորես . .

Մեր տէրտէրը հազարից մէկ սնգամ մի ուղիղ բան էր ասել, բայց դուրս է գալիս, որ էդ էլ պատահամբ է եղել: «Խօսք էր, ասում է, բերանս եկաւ, ես էլ ասեցի»: Մեր տէրտէրը, որ գիտէ, թէ դժոխքումը քանի հոգի կան, բայց չըգիտէ, որ Գրիգոր Լուսաւորիչն այդ ժամանակ դեռ ծնուած չէր, մեր գիտնական հոգեւորականների ներկայացուցիչն էր իւր ժամանակին, եթէ ոչ շատ, գոնէ մի քանի նահանգի վերաբերութեամբ, եւ մի քանի վանքերի, որոնց միաբանների բոլոր փիլիսոփայութիւնը ծաթեւացու հատորների մէջն էր ամփոփուած: Այս հանգամանքի վերայ կարծէ մի փոքր ուշադրութիւն դարձնել: Թող հնազէտն ու պատմաբանը իրանց հետազօտութիւնն անեն, իսկ նրանք, որոնք կոչուած են լոյս փռելու մեր աշխարհի խաւար անկիւններում, թող տեսնեն գրքերի ազդեցութիւնը ժողովրդի մտաւոր զարգացման վերայ . . .

Մեր տէրտէրը եւ նրա հետ բոլոր փոքրի շատէ աչքի ընկնող նշանաւոր կամ աննշան աստուածաբաններն ու քարոզիչները ի մանկութենէ ձգտում են ունեցել դէպի բարին, դէպի կատարեալն, բայց այդ ձգտումը նրանց տարել է դէպի խաւարի խորքը, որովհետեւ խաւար էր նրանց շրջապատող կեանքը: Այդ բանը յառաջ է գալիս ահա ինչպէս. — մէկ երեխայի մէջ ինչ ինչ պատճառով գոյանում է ձգտումն դէպի գրագիտութիւն: Ստիպում է նա իր ծնողացը, որ նրան տան գեղի տիրացուին կամ տէրտէրին գիր սովորելու համար: Ծնողքը կատարում են նրա խնդիրքը, տեսնելով, որ յիրաւի, նա շատ սրամիտ է, տան մէջ ինչ որ երգում են, իսկոյն սովորում է, հէքիաթ, առակ են ասում, նա կրկնում է, կրկնում է եւ աշըղների երգածները. այս հանգամանքն արդէն համարվում է առանձին ընդունակութեան յատկանիշ, որովհետեւ ինչպէս մեծերի, նոյնպէս եւ փոքրերի աշխարհում կան զանազան տիպեր, որոնք թէեւ դեռ լաւ չըկազմակերպուած, բայց շատ լաւ որոշվում են միմեանցից: Պատանի տա-

ղանդը տիրացուի կամ խալիփայի գիտութիւնը սեփականելուց յետոյ համարվում է ուսումնաւարտ: Գնում է նա այնուհետեւ տէրտէրի հետ թաղման, մկրտութեան, հարսանիքի. մի խօսքով վաղօրօք ընկնում է հասարակութեան մէջ, ընկնում է ծերերի շարքը, քեթխուղաների հետ է նստում վեր կենում: Այս հանգամանքից մեծ օգուտ է քաղում նրա յիշողութիւնը, նրա դիւրազգացութիւնը. նա դառնում է շատերի խորհրդակիցը, երազների մեկնողը, բախտի նայողը, նամակի, պարտամուրհակի, պայմանաթղթի գրողը: Պատահում է սրա նրա տանը հին գրքերի, որդոց որդի ժառանգութիւն մնացած, որ զգուշութեամբ եւ ահ ու դողով պահում են այն յուսով, որ իրանց տանից երբ եւ իցէ մինը կարդալ կրտովորի եւ մեծ օգուտ կըքաղէ նրա հոգեշահ խրատներից, կամ խորհրդաւոր գիտութիւններից: Այս գրքերն առհասարակ լինում են կրօնական կամ իբր բարոյական բովանդակութիւն ունեցող գրքեր: Հաւաքում է պատանին այդ տեսակ գրքերը եւ սկսում է գիշերցերեկ կարդալ: Մոռանում է տնային գործը,

ուշ չի դարձնում ոչ մի բանի վերայ. գիշերը նրան ճրագ չեն տալիս, նա կարդում է կրակի շեղջի լուսով: Տաքանում է նրա գլուխը, վառվում է երեւակայութիւնը, աւելանում է ուսման փափաքը, յղանում է վերջապէս իր ուսման ծարաւը զովացնելու զանազան հնարքներ, որոնցից ամենահեշտը եւ դիւրահասը համարում է վանականութիւնը: Եւ նա հասնում է իր այս նպատակին: Մի քանի տարուան մէջ ամբարվում է նա բազմակողմանի առասպելներով եւ սեւ գլխով վերադառնում ու սեւացնում շատերի խելքն ու միտքը: Դիւրագգաց բնաւորութեան վերայ մեծ ազդեցութիւն են գործում ամենահասարակ համարուած դէպքերը. նրան պատահած այս կամ այն գաղափարի տէր մարդը, այս կամ այն ուղղութիւն ունեցող գիրքը տակնուվրայ է անում նրա մտաւոր աշխարհը: Այսպիսի դիպուածների ենթարկուել էր եւ մեր տէր հօր հանձարը: Մտաբերելով իր երբեմն ունեցած ուսման փափաքը, նոյնը տեսնում էր այժմ եւ Արութիւնի մէջ եւ ցաւակցում նրան: Նա չէր կարող երեւակայել, որ Արութիւնի ապագայ

վարժապետները կարող են բոլորովին այլ ուղ-
ղութեան եւ գաղափարի տէր մարդիկ լինել,
որոնք ոչ միայն չեն շարունակիլ իր կիսատ
թողածը, այլ ինչ որ տուել է, այն էլ կաշ-
խատեն մի կողմ մղել, որ իրանց տալիք ու-
սումը մի մաքուր անկիւն գտնինրա ուղեղում: . .

Տէր Հայրն սկսեց պատմել իր տեսած ու
լսած բաներից, մինչեւ հասան Թէլէթի սարի
ստորոտը:

— Ի՛նչ հիմի վէր արի, ասաց տէր Հայրը,
ձին մեղք է: Որ բարձրանանք էս սարի գլու-
խը, քաղաքը կերեւայ:

Արութիւնն իջաւ ձիուցը, եւ մի քանի
քայլ ծանր փոխելուց յետոյ՝ զառիվեր թռաւ
արագալիւզ եղջերուի նման եւ տէրտէրին
շատ ցած թողնելով՝ ինքը բարձրացաւ սարի
գլուխը, որտեղից երեւեցաւ նրան քաղաքը:

Թիֆլիս քաղաքը նախթլուղից սկսած մին-
չեւ Վէրա յանկարծ բացուելով Արութիւնի
առջեւ, ապշեցրեց նրան: Չըտես, երեւակայու-
թեան աշակերտ, դիւրագգաց եւ դիւրագրը-
գիւ Արութիւնը մնաց տեղնիտեղը մեխուած,
էլ չըկարողացաւ մի քայլ յառաջ փոխել: . .

— Հրաշալի տեսարան, բացագանչեց վեր-
ջապէս Արութիւնը: Սա ինքն է «Պոնձէ քա-
ղաքը», ասում է Արութիւնը եւ քիչ է մնում
Տալիփի նման «շաբանշ-շաբանշ» աղաղակելով
թռչել սարի գլխից եւ ընկնել իր ներքեւն
ընկած խորերն ու ձորերը: Էս անպատճառ
Սողամնի հրաշագործութիւնովը կրկինն էսպէս
պայծառացրած. . . Ա՛խ, Աստուած թեւ տար
ինձ, էս բոպէիս կըթռչէի ու կըսկսէի սրա
վրայ պտոյտ պտոյտ գալ: Քաղաքացիք կըզսր-
մանային, կասէին՝ «էս ո՞վ է, երկնքիցն է
գալիս. . . Տէրտէրը Եղիսէի նման կաղաղակէր
«Հայր, Հայր, կառքով Իսրայէլի եւ հեծեալդ
դորա» . . . հէնց կիմանար, թէ Եղիայի նման
երկինք են տանում ինձ. . .

Մինչեւ Արութիւնն այսպէս մի քանի րո-
պէ կըզուարճանար քաղաքի երեւութով, տէր
Հայրն էլ հասաւ, իջաւ ձիուցը եւ մորակի
կոթը դէպի քաղաքը մեկնելով, ցոյց տուաւ
Արութիւնին, թէ ինչ տեղ է Առաջնորդարանը,
ինչ տեղ է կենում գործակալը, թէ այն՝ այս
ինչ եկեղեցին է ու այս՝ այն ինչ: Վերջապէս
մտան քաղաքը: Վախենալով որ մի գուցէ

Արութիւնը մոլորուի ու կորչի կամ դրոշկի տակ ընկնի, տէրտէրն առաջուց զգուշացրեց նրան, որ այս ու այն կողմ չընայի: Այսպէս հասան մինչեւ Հաւաքար, ուր ձին մի թաւլում կապելուց յետոյ, Արութիւնի ձեռով ուղարկեց գործակատարի համար բերած թխուածքըն ու մեղրահացերը: Գործակատարի տունը ցոյց տալու համար՝ տէր հայրը կանգնեցրեց Արութիւնին մի փողոցում, ձախ ձեռը դրաւ նրա ուսին եւ աջ ձեռը մեկնելով դէպի մի կողմ, ասաց.

— Էսպէս կերթաս, յետոյ աջու կռանըդ վրայ շուռ կըգաս, Էնտեղ մի նեղ քուչա կայ, Էն նեղ քուչովն էլ որ մի քիչ կերթաս, էլի մի ուրիշ քուչա կըգայ առաջդ, նրանով էլ մի քիչ որ կերթաս, մի տուն կըտեսնես՝ մի փոքր բախշա առաջին: Էնտեղ կըհարցնես, կասես՝ Տէր Փիլիպոսնց տունը որն է, կասեն՝ «այ, էս է»: Կըմտնես տուն, փափախդ վեր կըկաշնես, ու էդ կըտաս իրանց, կասես՝ տէրտէրն ուղարկեց: Իմացար:

— Իմացայ, խմացայ . . . Էսպէս կերթամ, յետոյ աջի կռանըս վերայ շուռ կըգամ . . . կըգտնեմ, կըգտնեմ . . .

— Ես գիտեմ, որ կըգտնես . . . Էս տեղը մտքիցդ չըգցես, ես էստեղ կըսպասեմ քեզ: Դէ գնա, մի վախենար: Տէր ուղղեսցէ զգնացըս քո ի ճանապարհս խաղաղութեան . . .



Դ.



ՎԻՊԱԿԱՆ ԱՆՅՔԵՐ

աւարարի տներէց մինի մէջ տախտի վերայ ծալապատիկ նստած՝ խօսում էին իրար հետ երկու մատաղահաս կանայք։ Սրանցից մէկն էր Արուսթիւնի քոյրը՝ Օսանան, իսկ միւսը Մանուէլի քոյրը՝ Հոռոմնիմը, որ Օսանին մօտիկ դրացի լինելով՝ եկել էր նրա մօտ գիւղից ստացած մի տխրալի լուր հաղորդելու։

Շատ անգամ աշխարհիս երեսին այնպիսի դէպքեր են կցորդւում միմեանց, որ կարծես մի աներեւոյթ ձեռք մի որ եւ իցէ նպատակով նրանց իրար հետ շաղկապած լինի։ Արուսթիւնըն ու Մանուէլը միմեանց հանդիպում են

դիպուածաբար, բարեկամութեան ուխտ են դնում ընազդմամբ, նրանց քոյրերն էլ՝ դարձեալ դիպուածաբար՝ վաղուց արդէն պատահել են միմեանց։ Երկուսն էլ հարս են քաղաքումը, երկուսն էլ դրացի, երկուսն էլ շատ սիրով կապուած միմեանց։

— Օսանա, գիտե՞ս էս քանի օրըս ի՞նչ է պատահել Դաղէթումը։

— Ոչինչ չեմ լսել, ի՞նչ է պատահել։

— Մագթաղի տղան՝ Սօսին ինքն իրան սպանել է . . .

— Ի՞նչ ես ասում . . . Խեղճ տղայ, ի՞նչ է պատահել տեսնես, ինչո՞ւ է սպանել . . .

— Մի չըլսուած բան. Շամիրն էլ իր կընկանը՝ Մարիամին է սպանել. Մարիամի նշնելու քուրը՝ Հերիքն էլ գժուել է, նա էլ էնտեղ է գլուխը մահու տուել. բոլոր անբախտութիւնը նրանից է պատահել, որ Սօսին ուզում է եղել նշանուի Հերիքի վերայ, կամ թէ նշանած է եղել, չըգիտեմ, միայն Հերիքը կենում է եղել իր քուոր կշտին, Սօսին նրանց մօտ թաքուն գնալ գալ է ունենում, Շամիրն էդ տեսնում է, վատ կարծիք է տանում

Մարիամի վերայ, վերջն սպանում է, տանում է կախ տալիս մէրումը, որ ասեն՝ «ինքն է խեղդել իրան»։ Հէրիքը գնում է գտնում, վախենում է, թէ ինչ է պատահում, գժվում է. Սօսին էլ որ իմանում է թէ ինչ բան է պատահել իր պատճառով, թուանքով խբում է ինքն իրան սպանում. Շամիրն էլ որ յետոյ իմանում է, թէ անմեղ է եղել Մարիամը, նա էլ էնտեղ է ինքն իրան սպանում. . .

— Ի՞նչ անբախտութիւն է, Տէր Աստուած, ես հէնց իմանում էի, թէ մենակ ինձ է պատահել էդպէս մի բան, հիմի տեսնում եմ, որ ուրիշներին աւելի վատ է լինում։

— Քեզ ի՞նչ է պատահել, փառք Աստուծոյ, դու ողջ առողջ ես։

— Չէ, ես ուրիշ բան էի ուզում ասել, միտքս ուրիշ տեղ գնաց. . . Խեղճ Մագթանդ, մինուճար մէկ տղայ ունէր, աչքի սեւն ու սիւղտակը, նրանից էլ զրկուեց. էլ ի՞նչ կապրինա։

— Ի՞նչ ապրել... Գիշեր ցերեկ տղի գերեզմանիցը չի հեռանում, ասում են, ոչ ուտում, ոչ խմում է, միշտ աղի արտասուք է թափում։ Ով գիտէ հիմի նա էլ գժուած կլլինի, կամ մեռած...

— Նարգիզի նման . . .

— Ո՞վ է էդ Նարգիզը . . .

— Իրա պատմութիւնը երկար է Հոռոմսիմ։ Ախրը իմ գլխովն էլ է էդպէս մի բան անց կացել. . . Տեղը չի եկել, որ պատմեմ քեզ։

— Ասա, մէկ ասա, ստիպեց Հոռոմսիմը։ Ես նկատել եմ, թէպէտ քեզ չեմ ասել, որ մի հին ցաւ կայ քո սրտումը։ Զմեռուայ արեգակի նման շուտ շուտ ամպի տակ ես մտնում, էնպէս ես տխրում։ Միտք եմ անում, ասում եմ, ի՞նչ պիտի լինի սրա դարդը. . .

— Ականջ դիր, հիմի ասեմ. «Ես դեռ օրօրոցումը, մեր հարեւան Նարգիզը մի խաչ է քաշում իմ օրօրոցի վերայ, թէ Օսանին իմ Ռոստոմի համար պիտի ուզեմ։ Մէրըս էլ ասում է. շատ լաւ։ Չորս տարեկան դառած չըդառած՝ Նարգիզը մէկ օր եկաւ, ոսկէ զընջիլով մի մեծ խաչ մանէթ կախ տուաւ շնքիցս, թուշիցս էլ պաչեց, թէ՛ դու իմ Ռոստոմի նշանածն ես։ Ես էլ շատ ուրախացայ. մրտքումս ասում էի, էս ի՞նչ լաւ բան է. բայց թէ ինչ բան է, ես ինչ կըգիտենայի։ Ռոստոմն էլ, ճշմարիտ է ինձանից երեք թէ չորս տարով

մեծ էր, բայց նա էլ ինձ նման ոչինչ չէր հասկանում. անմեղ սրտով մենք շատ սիրում էինք մէկմէկու: Օր չէր լինիլ, որ կամ ես չերեւայի նրա աչքին, կամ նա իմ: Էսպէս մենք իրար սիրով վառուած՝ հեքեաթներում ասածի նման՝ ով տարով կրմեծանար, մենք օրով էինք մեծանում: Ռոստոմը դեռ տասներ- հինգ տամնրվեց տարեկան չըկար, տեսնողն ասում էր քսան տարեկան կըլինի—բեխատե- ղերը սեւացած, հասակը չինարի դառած. . . Օր ու գիշեր աշխատում էր, որ ոչ մէկ տը- դից յետ չըմնայ, թէ խաղալում, թէ կպչելում, թէ որս անելում, թէ մարդավարութենում, թէ տան ու տեղի հոգս քաշելում: Քանի որ փոքր էի, ես չէի փախչում նրանից, խօսում էլ էի հետը: Մէկ օր հարցրի, ասեցի՝ «բա չէս յոգնում, որ էդքան դէս ու դէն ես ընկ- նում». . . . Նա թէ՛ «Չէ, Օսան քան, երբ որ քեզ տեսնում եմ, թէ յոգնած եմ լինում, հանգստանում եմ, թէ քաղցած՝ կշտանում, թէ տխուր՝ ուրախանում. . .

—Օ. . . սէրն ինչ ասես, թէ չի անիլ. . . Ես էլ եմ սիրել, ես գիտեմ, ասաց Հոռոմանիմը. . .

—Մէկ օր—շարունակեց Օսանան—մէկ օր իմ մօրաքրոջ տանիցը գալիս էի, — իմ մօ- րաքոյրը մի շատ պատուական կնիկ էր, գիր էլ գիտէր, նա ինձ համ գիր էր օտւրեցնում, համ կար ու գործ.—հա, իմ մօրաքրոջ տա- նիցը գալիս էի գուլբա անելով, գիրս էլ կը- ռանս տակին, հէնց որ հասայ մեր տան ներ- քեւը մի ձոր կայ, էն ձորը, մէկ էլ տեսնեմ Ռոստոմը, թուանքն ուսին, եկաւ առաջս: Տեղ չըկար, որ թաք էի կացել, մնացի սառած, աչքերս գետնին գցած, կանգնած: Ես հիմի հասկանում էի ամեն բան, գիտէի, որ ճշա- նածիցը պէտք է փախչել, պէտք է չխօսքան կենալ: Ռոստոմը տեսաւ, որ ես շատ ամաչեցի, մի քիչ յետ կանգնեց, ու թէ՛ «Մի ամաչիլ, Օսանա քան. . . էդ ինչ է կռանդ տակին դրած, գիր ես սովորում, կուս խօմ չէս դառ- նալու»: Ես գլուխս շարժեցի: Նա թէ՛ «Էլ ինչո՞ւ ես գլուխդ օրօրում, կամ հա՞ ասա, կամ չէ»: Վերջը երբ որ տեսաւ, թէ ես ոչ խօսում եմ, ոչ գլուխս բարձրացնում, «Ականջ դիր, ասեց, Օսանա, տես ինչ եմ ուզում ասել քեզ: Ես ոչ հէր ունիմ, ոչ քոյր, ոչ ախպէր,

մի մէր ունիմ միայն, որ ինչքան ինձ է սիրում, էնքան էլ քեզ: Մենք դեռ շատ փոքր ենք էլի, որ մեզ նշնել են, հիմի մեծացել ենք, խելքի հասել, կարող ենք ես էլ դու էլ չըհամաձայնել, եթէ չուզենանք, չըսիրենք մէկ մէկու: Ես լսել եմ, որ քո հէրը մի քանի տեղ ասել է. «Իմ աղջիկը նշանած չէ»: Քո հէրը մէկ շատ իր ասածի մարդ է, մէկ որ «չէ» ասեց, էլ ողջ աշխարհքը նրան չի կարող «հա» ասել տալ: Բայց ես չեմ վախում, քանի որ ես կենդանի եմ, ոչով կարող չէ քո մէկ մազին դիպչիլ, միայն թէ ես գիտենամ, որ քո խօսքն ու սիրտն ինձ հետ է: Ի՞նչ հիմի ինձ ասա, մէկ իմանամ, տեսնեմ դու էլ ինձ սիրում ես, թէ մենակ ես եմ գոռել, որ ոչ գիշերն ունիմ քուն, ոչ ցերեկը հանգիստ . . . Այս, կրակն էլի լաւ է, մէկ անգամ էրում է պրծնում» . . .

«Ես, ճշմարիտ է, շատ ամաչում էի, բայց սիրտ արի, գլուխս բարձրացրի, որ միտիկ տամ Ռոստոմի երեսին, ասեմ. «Ես քեզ սիրում եմ, իմը դու ես որ կաս, ինչ անելու ես, արա. կուզես փախցրու, կուզես սպանիր,

որ ուրիշի ձեռք չընկնիմ . . . Բայց Ռոստոմի սիրից երեսը, աչքերից կաթկթելիս արտասունքը որ չըտեսայ, գլուխս շժմեց, ձեռներս թուլացաւ, գուլքէն ձեռիցս վէր ընկաւ, կըռացայ թէ վեր կանեմ, աչքերս մթնեց, վէր ընկայ . . . Յետոյ իմացայ, որ երբ որ ես թուլացած վէր եմ ընկել, Ռոստոմն ամաչել է, թէ վերցնի, վազել է մօրն իմաց տուել, որ շուտ գայ ինձ օգնի . . .

«Վերջապէս՝ էլ ինչ գլուխդ ցաւացնեմ. իմ հէրն էստեղ մի բարեկամ Թանի, Օվակիմ է անունը: Պէտք է որ ճանաչես, մեզանից մօտիկ են կենում . . .

— Սօփիոյի մարդին չես ասում. գիտեմ, ինչպէս չէ . . .

— Հա, հէնց նա ինքը: Դա մի շատ կարգացած մարդ է. իրանից գրքեր է հանում, բաներ է գրում . . . Ինչ եւ իցէ: Եդ Օվակիմը ամեն բաղաքաղի ժամանակ գալիս էր մեր տուն, մի քանի օր մնում էր, ինձ դաս էր տալիս, քաղքիցը բաներ էր առնում ուղարկում, մի խօսքով ինձ շատ էր սիրում, ասում էր՝ քեզ ես պիտի մարդի տամ, բայց ում որ

դու հաւանես, ես էլ հաւանեմ, նրան կրտամ: Մի բաղաքադի ժամանակ էլ եկաւ մեր տուն: Իրիկնահացից յետոյ՝ իմ հէրն ու դա մի մի բարձի վրայ թինկը տուին ու սկսեցին զրից անել: Վերջը էս Օվակիմը խօսքն ինձ վերայ բերաւ, թէ՛ «Գիտե՞ս ինչ է, Աւետիք, մեր Օսանէն գեղի յարմար աղջիկ չէ: Ափսոս չէ՛, էսպէս սիրուն շարմաղ աղջիկը գլու՛մը թողնել:

«Օվակիմի էս խօսքի վերայ հէրս մի առակ տեսց, թէ՛ «Մի թագաւոր երեք տղայ է ունեցել, երեքին էլ խրատ է տուել, թէ՛ որ բաղաք, որ գեղ որ գնալը, ամեն տեղ ձեզ համար մի տուն շինեցէք: Մեծ ու միջնակ տղէքը ամեն տեղ էլ ահագին պալատներ են շինում, մեծ փող ծախսում, բայց փոքր տղէն ոչ մի տուն չի շինում, միայն ուր որ գնում է, մէկին իրան բարեկամ է շինում: Մէկ տեղ խաչեղբայր է դառնում, մի տեղ կնքահայր, մի տեղ մէկին մի բարերարութիւն է անում, մի ուրիշ տեղ ուրիշ տեսակ բարութիւն անում: Էսպէսով ամեն տեղ էլ իր լաւութիւնով մի պատշաճ տուն է գտնում իր համար:

Թագաւորը վերջը փոքրին է գովում, թէ «Իմ միտքն էլ հէնց էդ էր»... Հիմի նրանը չլիինի, Օվակիմ, իմ միտքն էլ հէնց էդ է: Ուզում եմ Օսանին քաղաքումը մարդի տամ, որ քաղաք գնացած ժամանակս էնտեղ մի տուն ունենամ, չըգնամ թաւումը վէր գամ, ախոռումը քնեմ ուրիշների պէս: Շնորհակալ եմ, քո տան դուռը միշտ բաց է ինձ համար, բայց քո կնիկը ոչ իմ տրեխներս կըհանէ, ոչ ոտներս կըլուանայ. երբ որ աղջիկս կըլի, նա ամեն բանն էլ կանի»: Էս ասեց հէրս ու դուրս գնաց, որ տեսնէ՛ շներն ո՞ւմ վրայ են հաչում. . .

— Դու ուրիշ տեղ տուն չես կարող շինիլ, ամսեղ տեղը քու տունն էլ կըքանդես. . .

«Էս իմ մօր ասած խօսքն է, որ մտիցս չի ընկնում: Էն օրուանից մինչեւ հիմի որ ահա տասը տարի է, իմ հէրը չորս տեղ տուն է շինել, բայց ոչ մէկումը իր սիրտը չի տալիս, որ մի գիշեր պառկի. . . Ինձ տուաւ էս տեղ, որ տեսնում ես ինչպէս խալթ են, մարդի բերնի թիբէքը համբրում են, միւս երեք քուորս էլ տուել է ուրիշ ուրիշ գեղերում,

մէկը մէկէլից վատ տեղ, օրուան հացի կարօտ:

«Երբ որ հէրս դուրս գնաց դուռը, Օ-վակիմն սկսեց.— Հիմի դու ի՞նչ կասես, Օսանա, կուզէս, որ քեզ համար քաղքումը լաւ տղայ, խելօք տղայ գտնեմ. . .

«Ես առաջ չըխօսեցի, մօտիկ տուի մօրս երեսին, տեսայ, որ նա հաւան չէ նրանց ա-սածին, բայց վախում է, ոչինչ չի ասում: Դրա վերայ, ես սիրտ արի ասեցի.— Բիձա, դու խօս գիտես, որ ես նշնուած եմ, ինչո՞ւ ես իմ հօր սիրտը պղտորում: Նա թէ.— գիժ խօս չէս, աղջի, փոքր ժամանակդ օրօրոցիդ վրայ թուրքի պէս խազ են քաշել, էդ ի՞նչ նշնել է. հիմի դու մեծացել ես, խելքի ես հասել, կարող ես քո սրտի ուզածին գնալ: Հիմա դու սիրում ես Ռոստոմին:— Ռոստոմը շատ լաւ տղայ է, բիձա, ո՞վ չի սիրիլ նրան, ասացի. . .

— Հա. . . դէ որ բանն էդ տեղն է հա-սել, էլ ես չեմ խառնուիլ, ես մեղայ Ասատու-ծոյ. . . Ես ու իմ Աստուածը, գիժ գողըցի պիտի ըլի, որ քաղքցուն երանի տայ, քաղա-քին թամազ անի: Խելօք մարդը գեղումը

հաղար փառքով լաւ կապրի քան թէ քաղքումը, բայց որ գեղըցիք իրանք կուպիտ են, չեն ի-մանում մարդավարի ապրիլը, ո՞վ է մեղաւոր: Մէկ ասող լինի դրանց՝ այ օրհնուած մար-դիկ, ջուրը խօս փողով չէ, ինչո՞ւ չէք ձեզ իստակ, մաքուր պահում. . . Մի կարգ, մի կանոն չըկայ. անասունի պէս ուտում են, ա-նասունի պէս մեծանում: Որը բուղի նման շլինքը հաստացնում է, գոռում, գոչում, գը-լուխը հողերին, քարերին խփում, կատաղում մարդի միս ուտում, որը լղարում է քոսոտ ձիու նման սրան նրան կեղտոտում, ցաւով գցում. . .

«Ես խօսքի վրայ հէրս դռնիցը տուն մտաւ:

— Էդ ի՞նչ է, Օվակիմ, էլի չարացել ես:

— Ձեմ չարացել, Օսանին խրատում եմ, որ դու ինչպէս կըհրամայես, նա էլ էնպէս անի. . .

— Տեսնես Օսանի բերնին ո՞վ է մօտիկ ա-նում, ո՞վ է նրան բան հարցնում: Իմ աղջիկը չի, ձեռքիցը կը բռնեմ, ում ուզենամ, նրան կըտամ. . .

— Դու կըտաս, ես գիտեմ քո բնութիւնը. մէկ որ բարկանաս, էլ աջ ու ձախ չես մօտիկ

տալ: Բայց չըմբռնաւ, որ դու էլ ես ջահէ-
լովթիւն ունեցել, դու էլ ես մի ժամանակ
սիրել ու սիրուել . . .

— Ինչե՞ր ես խօսում, Օվակիմ, չընի՞ թէ
քեզ ջադու արին, քեզ բան ասեցին, միջնորդ
գցեցին. . . — Բո խաթրը չըլինէր, ես հիմա
դրանց կոտորել էի . . .

«Հօրս էս խօսքերի վերայ մենք իրար
երեսի մտիկ տուինք, թէ սա ինչի՞ է բարկա-
ցած, մեզ ինչի՞ պիտի կոտորէր: Նրա բարկա-
նայու պատճառը շների հաչոցն էր: Ռոստոմը
մթնի մէջը թաքուն եկել էր մեր տան հէրթի
մօտ կուչ եկել, որ իմանայ, տեսնի իրան
օգուտ են խօսում, թէ՛ վնաս: Եները չէին
ճանաչել, ոկսել էին հաչել: Հէրս վրայ է հա-
սել, ճանաչել:

«Միւս օրը, երբ որ Օվակիմը վաղ առա-
ւօտուն ճանապարհ ընկաւ դէպի քաղաք, հէ-
րըս սկսեց երեւացնել իր բարկովթիւնը: Հացի
ժամանակ էր, մէրս կերակուրը պատրաստել
էր, ինձ էլ ասեց, որ սուիրէն գո՞ւմ: Սուրի-
րէն գցեցի, հաց, սոխ, պանիր, մածուն, ինչ
կար չըկար տանը, մէջ տեղ բերի, որ նրանով

հօրս սիրտը շահեմ: Բայց նա հացի չընստեց:

«Ինչպէս որ երկինքը, երբ որ կարկուտ
կամ սելաւ է լինում տալու՝ առաջ մթնում
է ու սեւանում, ամպերն սկսում են գոռալ,
ու էստեղ էստեղ պէծին պէծին է անում,
էգպէս էլ իմ հօր երեսը ամպեց ու մթնեց,
որոտաց, աչքերը պէծին պէծին արին—ինչ
ասեց, ինչ չասեց, չըգիտեմ, խանչալը որ կայ-
ծակի նման պսպղաց, ես թուայ ընկայ հօրըս
գիրկը . . . Ել չըգիտեմ, ինչպէս էլաւ, որ
Աստուած էգպէս շուտ ինձ խելք ու միտք,
ուժ ու զօրութիւն տուաւ. . . մի աչքաճպե-
լումը մօրս գլուխը պիտի թռչէր, թէ որ մի
քիչ ուշ կտրէի հօրս առաջը . . .

«Հօրըս ձեռիցը խանչալը վէր ընկաւ . . .
մի կէս ժամ ոչինչ չըխօսեց. գոյնը դեղնեց,
սփրթնեց, երեսը շուռ տուաւ դէպի աղօթա-
րանը, խաչահանեց, «նահլաթ քեզ, չար սա-
տանայ» ասեց ու խանչալը վեր կալաւ դրաւ
տեղը՝ դուրս գնաց . . .

«Մէրս ինչպէս նստած էր, էնպէս էլ մը-
նաց նստած, քարացածի նման: Երբ որ հէրըս
դուրս գնաց, մէրս բարկացաւ ինձ վերայ,

Թէ՛ «Քեզ ո՞վ ասեց մէջ ընկնիս, կըթողէիր մէկ անգամից կազատուէի դրա ձեռիցը» . . .

«Մօրս թողեցի տանը նստած, ես դուրս եկայ դուռը, որ տեսնեմ ուր է գնում հէրս: Նա գնաց գեղամէջ, որտեղ մի քանի ուրիշ մարդիկ էլ կային: Յետոյ դրանք ամենքն էլ միատեղ գնացին մտան մի տուն: Ցան տէրը գինու նոր կարաս էր բաց արել, նրանց կանչեց, թէ՛ եկէք մի համն առնենք, տեսնենք ինչպէս գինի է: Մէկ մէկ չափ գինի պիտի խմեն, էդ՝ նրանց մոքով՝ համը պիտի առնեն. . .

«Ճրագ վառելու ժամանակն էր, որ հէրս եկաւ: Դեռ տուն չըմտած, տաւարածի վերայ բարկացաւ, նա էլ մի բան մահաճա արաւ, կշտիցը հեռացաւ, որ ծեծ չուտի, յետոյ հէրըս տուն մտաւ: Մի երկու փէտ դրաւ կրակի վերայ, կշտին նստեց ու սկսեց ինքն իրան խօսել: Ինչ էր խօսում, ես չէի իմանում, երեւում էր միայն, որ ինքն իրան շատ էր վիրաւորուած համարում, որ իբր իշխանութիւնն ուզում են ոտի տակ տալ, որ իրան մարդի տեղ չեն դնում, չեն խոնարհում, չեն հնազանդում առանց ձայն ծպտուն հանելու:

Վերջը խօսքը դէպի մօրս դարձրեց .

—Քեզ եմ ասում, այ կնիկ, դու ի՞նչ իրաւունքով ես առանց իմ կամքի աղջիկ նըշնում: գիշերուայ կիսին էն անպիտանն ի՞նչ ունի մեր հերթի վերայ. կարելի է թէ մենք մեր տանը մի թաքուն բան ունինք, չենք ուզում, որ աշխարհք իմանայ . . .

«Մէրս տեսաւ, որ սուս կենալով աւելի կըբարկացնէ, սկսեց խօսել ու ասեց.

—Ինչի՞ ես քարացրել սիրտդ, այ մարդ, ինչի՞ ես մոլորուել, խալխին էլ դու ես խթատում, հիմի ինչի՞ քո գլխին չես խրատում: Ի՞նչ ես ուզում դու ինձանից, ես քեզ ի՞նչ եմ արել: Էս դու, էս քո աղջիկը, ի՞նչ ուզում ես արա, ո՞վ է քո ձեռքիցը բռնում: Ե՛հ, ես կարծում էի, թէ ես էլ սրա մէրն եմ, որ սա ինչքան որ քոնն է, էնքան էլ իմն է. ինչպէս դու, էնպէս էլ ես, չենք ուզում, որ սա անբախտ լինի: Թէ որ կուզես, էլի միտք անենք միասին, խելք խելքի տանք, ինչպէս որ լաւ կըլինի մեր աղջկան համար, էնպէս անենք: Հէնց համարենք, թէ նշանուած չէ, նոր ենք ուզում նշանել: Ինձ որ մնայ, ես Ռոստոմիցը

լաւ տղայ չեմ ճանանչում մեր գեղումը, մեզ մօտիկ, մեր ձեռի տակին, մեր աչքի առաջին, մեր աղջիկն էլ նրան է հաւանում, նրան է սիրում: Դու ինքդ էլ նրանում մի փուտ չես գտնում, հէնց ուզում ես, որ անբախտացնես երկուսին էլ . . .

«Մի խելօք մարդ որ լսի էս խօսքերը, կասէ՛՝ «Մի՛թէ էնպէս մարդ կը գտնուի որ դրա հակառակ մի բան ասէ. թէ որ կը գտնուի, պէտք է որ էդ մարդը շատ յիմար լինի»: Դու ի՞նչ կասես, Հոռոմնիմ. . .

— Ես քո հօր մասին մի հաղար անգամ լսած կըլինիմ իմ հօրից, թէ նրա նման խելօք, ճարտար մարդ չըկայ մեր գեղերումը, ասեց Հոռոմնիմը: Իմ մտքով, պէտք է, ոչինչ չըխօսի, պէտք է որ հաւանի մօրդ առածին: Բայց որ իմ հէրը լինէր, հէնց իրա ձին կըքշէր, թէպէտ նա էլ յիմար մարդ չէ: Մեր մարդիկն ամեն բանում խելօք են, բայց մեզ հետ յիմար: Էդ նրանից է, որ մեզ յիմարի տեղ են դնում, կամ ոչինչ բանի տեղ չեն դնում: Առաջ իրանք գոփում, մեզ ուզում են, յետոյ ասում են, դուք սատանայ էք,

մեզ խաբեցիք: Դէ արի դրանց բան հասկացրու: Միտս է, շատ անգամ որ մէրս մի խելօք բան էր ասում, հէրս չէր հաւանում, թէ «կնկայ մազն երկէն կըլի, խելքը կարծ»: Կնիկն ու ձին, ասում էր, մի հանգի են, կապը որ ձեռիցդ թողեցիր, էլ նրանից քեզ խէր չըկայ: Կնիկը որ կայ, սատանայ է, էնդուր չեն վարդապետները կնիկ ուզում: Եւան աշխարհքի տունը քանդեց, ամենքին էլ դժոխք տարաւ: Կնիկ չէր, որ Օհաննէս Մկրտչի գլուխը կտրել տուաւ, որ մինչեւ հիմա էլ ոչ մի կնիկ չի կարող Ս. Կարապետի եկեղեցին ներս գնալ: Մէկ օր ես իմ մարդին ասեցի, ասում եմ՝ թէ որ կնիկը սատանայ է, մարդը հրեշտակ, բա ինչի՞ դժոխքումը ոչ մի կնիկ չըկայ, դիմ տղամարդիկ են: Նա մնաց սուս կացած, յետոյ թէ՛ էդ անկարելի է, երեւի լաւ չեն փնտրել դժոխքի քունջ ու պուճախը, մէկ էլ թէ՛ սատանէն սատանի ինչի՞ն է պէտք, նրա հացը կըկտրի. . . Ինչ որ է, յետոյ քու հէրն ի՞նչ ասեց . . .

— Այ կնիկ, ասեց, էդ էր մնացել, որ դու ինձ խրատ տաս: Դու քիչ քիչ ինձ մար-

դուժիւն էլ կանես, քու լաչակը կըգցես իմ գլխին, իմ փափախը կըգնես քո գլխին: Եդ չէ՞ բո՛ւ ուղածը: Բայց դո՛ւ չես գիտում, որ ես կնկայ խելքով ապրողներին չեմ: . . . Հանեցէք էդ մանէթը, յետ ուղարկեցէք, թէ չէ՞ էս սՀաթիս երկուսիդ էլ կտոր կտոր կանեմ»: Յետոյ ինձ վերայ բարկացաւ, թէ՛ «գիտե՛ս քեզ ինչ կանեմ, թէ որ այսուհետեւ տանից դուրս ես եկել, կամ էն տղի աչքումն երեւցել. քեզ ոչ թէ խանջալով, սղոցով կըմորթեմ քեզ: Ի՛է, շո՛ւտ, հանիր էդ փողը շնքիցդ»:

«Ես մնացի սառած, սփրթնած, չիմացայ թէ ինչ անեմ: Մէրս արտասուեցն աչքերին վեր կացաւ հանեց նշանս տուաւ իրան, նա էլ տուաւ տաւարածին, որ տանի յետ տայ: Եդ ժամանակը էլ ես չիմացայ, թէ ինչ ասեց մէրս, մէկ էլ էն տեսայ, որ գետնի վերայ փռուեց: Ես քանի ջանումս ջան կար, բղաւեցի ու ընկայ հօրս խրտիտը. հէրս ինձ շարտեց պատուիլ տուաւ: Ել այնուհետեւ ես չեմ իմացել, թէ ինչ է անց կացել մեր տանը: Երեք օր անց կացած լսեցի ամեն բան: Երբ հէրս ինձ պատուին է տալիս, գլուխս պատուփում է,

ես մնում եմ թուլացած, վէր ընկած: Հարեւանները լսում են, գալիս են տեսնում ես մի տեղ եմ վէր ընկած, մէրս մի տեղ, հէրս մնացել է երկուսիս մէջ տեղը շուարած կանգնած. . . Մեր յիմար տաւարածն էլ, որ տեսնում է բանն ինչպէս է, համ տանում է նշանը տալիս Ռոստոմին, համ ասում. «Ել այսուհետեւ ապրում ես ի՛նչ անես, Աւետիքը քու խաթրու իր կնկանն էլ սպանեց, աղջկանն էլ»... Ռոստոմի խելքը գլխիցը թռչում է: Վրայ է ընկնում լիքը դաբանչէն տեղիցը վեր բերում, սրտին բռնում. «Ղորդ ես ասում, ասում է, էլ այսուհետեւ ո՛ւմ համար պիտի ապրեմ, էս ասելն ու դաբանչի կրակ տալը մէկ է անում. . .

— Վայ, վայ, վայ. . . Խեղճ տղայ, բացաբանչեց Հռոմմիմը: Հիմի նրա մէրն ինչ կանէր, մինուճար որդուցը զրկուած. . .

— Մէրը գժուեց. . . Ի՞նչ որ նա էր անում, Աստուած ոչ նշանց տայ. . . Լաւ էր որ շատ չապրեց, մի շաբաթ չըբաշեց, նա էլ մեռաւ:

— Խեղճ կնիկ: Լաւ է որ մէրդ ազատուել է մահից:

—Մէրս շուտ չըլաւացաւ. դրա վերայ նա մէկ տարուց աւելի պառկած մնաց. հէրս բժիշկ բերել տուաւ լաւացրեց: Ինձ էլ յետոյ բերին էստեղ մարդու տուն. . .

—Դուք որ շատ սիրում էիք մէկ մէկու, ինչու Ռոստոմը քեզ չէր փախցնում:

—Եդ անկարելի էր, իմ հէրն էն ժամանակը ինձ էլ նրա հետ կըսպանէր. . . Հաբա: Հիմի տասը տարի է, որ ես մեր տանը չեմ էլել, մօրս երեսը չեմ տեսել, ախպէր ունիմ, որ ասում են գեղումը լաւ կարգում է, չեմ տեսել. որ միտս է ընկնում մեր սարերի հով հով տեղերը, ցուրտ ցուրտ աղբիւրները, ալփան ալփան ծաղկները, հալվում, մաշվում եմ կարօտից: Էս քանի ժամանակ է, հազում եմ, սրտիցս արիւն է գալիս, ես գիտեմ, որ շատ չեմ ապրիլ. . . .

—Դէ լաւ է, դարդ մի անիլ: Մեր Մանուէլն ասում է, Արութիւնը պիտի գայ քաղաք, գլուխս տարել է, ասում է Օսանին հարցրու, տես երբ պիտի գայ: Դէ լաւ է, աչքերդ սրբի. . . Կոպիտ են, կոպիտ մեր գեղըցիք: Մանուէլը նրանց լաւ է նախշում:

Էս օր մէյդանումն էի, ասում է, մեր գեղիցը մարդիկ էին եկել. ասում եմ՝ «բարով էք եկել, ինչ էք անում, ինչպէս էք». «Փռաք Աստուծոյ, ասում են, լաւ ենք, պահել է բարի աղօթքըդ, դու ինչպէս ես, ինչքան փող ես աշխատել». . . Եդ ախմախներն, ասում է, էլ չեն ասում, թէ ինչ ես սովորել, ասում են՝ ինչքան փող ես աշխատել: Ասում եմ, հօրս ասացէք մի քիչ ալիւր, բան ուղարկի, էստեղ քաղաք տեղ է, ամեն բան փողով են առնում: Քեզ, ասում են, ախպէրք ունիս, նրանք քո նօքարը խօմ չեն, որ քեզ համար վարեն, ցանեն, կասեն, աղան, բերեն քեզ տան, որ դու ուտես, քեզ համար մարդ դառնաս, յետոյ գաս ասես, ինչ որ հօրական ապրանք ունինք, կեսն իմն է: Հրէն, ասում են, Ներկարարի տղէն էլ է ուտում առել, էլ հօրն ու մօրը չի ճանաչում: հօր վերայ բարկանում է, թէ «Երբ որ տեսնում ես թէ ինձ հետ աղա մարդիկ են խօսում, դու ինչի՞ ես միբուքդ տմբտմբացնելով մէջտեղ գալիս, որ տեսնեն, թէ ես ում տղէն եմ». . . Ասում եմ, ես էնպէս յիմար չեմ լինիլ, թող ես լաւ մարդ

դառնամ, ես իմ հօր տղէն լինելս ինձ համար
պարծանք կը համարեմ, ձեզ ամեն մէկիդ աշ-
քիս լուսի նման կը տիրեմ. . . Ինձ չեն հաւա-
տում, ասում են՝ «միշտ էդպէս են ասում,
յետոյ գալիս են մեր գլխին աղա դառնում». . .

Դեռ Հոռոմնիմն իր պատմութիւնը չէր
աւարտել, յանկարծ ներս վազեց մի պատանի՝
կարմրած, քրտնած, երեւում էր, որ շատ էր
վազել, որովհետեւ չէր կարողանում շնչառու-
թիւնը հանգարտեցնել:

— Ահա եկաւ մեր աղան, ասաց Հոռոմնիմն,
ասած է՝ «Անունը տուր, խալիչէն գցիր». . . Ի՞նչ
կայ, ինչի՞ ես էդպէս կարմրել, Մանուէլ. . .

— Եկել եմ «անկաջաբռնով», ասաց Մա-
նուէլը եւ վրայ ընկաւ Օսանի ականջիցը պինդ
բռնեց: — Ասա, անկաջաբռնով ի՞նչ պիտի տաս.

— Մանուէլ ջան, կամանց հուպ տուր,
հէնց ապրես, անկաջս ցաւում է, ասաց Օսանան:

— Ես էդպէս բաներ չը գիտեմ, ասա. . .

— Եթէ լաւ բան կըլի, եթէ կամ ախպէրս
կըլի եկած, կամ մէրըս, ես քեզ համար մի
շատ լաւ ժամաշապիկ կըկտրեմ. խաչերով,
զառերով, նախշերով. . . Ի՛է ասա. . .

— Արութիւնը եկել է. . .

— Աորդ ես ասում. բա դու որտեղ տե-
սար, ինչի՞ չըբերիր ինձ մօտ. . .

— Ա՛յ ինչպէս տեսայ, անկաջ դրէք, պատ-
մեմ: Ուսումնարանից դուրս եկած՝ տուն էի
գալիս, մէկ էլ տեսնեմ մի տղայ՝ խուրճինը
շալակին, մնացել է Շամքոռեցոց եկեղեցու
մօտ, շլինքը դէս ու դէն ծովուելով՝ կանգնած:
Սիրտս ասեց՝ մէկ գնա տես էդ ուլ է: Վա-
զեցի մօտը, տեսնեմ—մեր Արութիւնը. . .

— Վճ՛ւյ քօռանամ ես, ուլ գիտէ ճամբէն
կորցրել էր. . .

— Ի՛է համբերիր ասեմ է. . . Արութիւն,
ասում եմ, էդ դ՞ու ես. . . Ել ի՞նչ ասեմ, էլ
ո՞վ կարայ մեր ուրախութիւնը լեզուով ասել:
Վերջապէս հարցնում եմ, թէ էդ ի՞նչ է, ո՞ր
ես տանում: Նա թէ՛ «Գործակալի մօտ պիտի
տանեմ էս բաները, տունը չեմ գտնում». . .
Խուրճինը ձեռիցն առայ, ուսուխ գցեցի, ասե-
ցի՝ դու յոգնած կըլիս, թող մի քիչ էլ ես
տանեմ: Բաները տարանք գործակալենց տունը,
էնտեղից էլ գնացինք թաւէն գտանք: Տէր-
տէրին ասում եմ՝ մենակ ինչո՞ւ էիր ուղար-

կում էս խամ երեխին. նա թէ՛ «ձմարիտ է, ուղարկեցի, բայց մէկ էլ փոշմանեցի, ասած է՝ «երեխին բանի դիր, եղնէն գնա» . . . Ա՛պրես, անպրես, ասում է, որ Արութիւնիս օգնել ես: Յետոյ հարցրեց, թէ դու ո՞ւմ տղէն ես, ես էլ ասեցի, նա էլ գլխիս պահպանիչ ասեց, շատ լաւ տէրտէր է. . .

— Յետոյ ո՞ր գնացին, բա ինչո՞ւ չըբերիր Արութիւնին . . .

— Յետոյ նրանք գնացին Օվակիմենց տունը, ես էլ՝ միտս չընկաւ, որ ուրիշի տուն են գնում, ինքս էլ գնացի Արութիւնի հետ: Ուղեցի էնտեղից շուտ գամ, քեզ իմաց տամ, Սօփիոն չըթողեց, թէ կաց Արութիւնի մօտ միասին չայ կըխմէք. . . Շատ լաւ կնիկ է էդ Սօփիոն. . . Օվակիմն էլ է լաւ մարդ, ասում են, շատ գիտուն է. . . Արութիւնից մի քանի բան հարցրեց. Արութիւնն էլ շատ լաւ պատասխան տուաւ. . . արբա ի՞նչ պիտի ասեն նրան, որ նա չըգիտենայ, աշխարհքիս տակ ու գլուխը գիտէ. . . Օվակիմը շատ գովեց. «Ա՛պրես, անպրես, ասեց, ես գիտէի, որ դու խելօք տղայ պիտի դառնաս, ասած է՝ «լաւ եղբ մօր

ծծին կերեւայ, լաւ երեխէն՝ օրօրոցումը» . . .

— Դէ աչքդ լուս, Օսանա, ասաց Հոռոմսիմը: Հիմի ախպէրդ եկաւ, էլ էնքան չես տխրիլ, պահիր մօտդ, Մանուէլի հետ միասին կերթան Վանքի ուսումնարանը. . . Դէ մնաս բարով, հիմի սկեսուրդ կըգայ, կասի՝ էս ի՞նչ է, միշտ մեր տանն է նստած, ով գիտէ՝ ինչեր կըլի խրատ տալիս հարսիս. . .

— Ես հիմի կերթամ կրտսենեմ ախպօրս, թէ որ տէրտէրը կըթողնի, կըբերեմ ինձ մօտ. . . Ա՛պրես, անպրես, Մանուէլ ջան, որ ինձ ուրախացրիր. . . Ժամաշապիկդ չեմ մոռանալ, ասածս ասած է. . .

— Քեզանից ժամաշապիկ չեմ ուզում, միայն թէ Արութիւնին պահես մօտդ, էլ չըթողնես գեղը գնայ, ասաց Մանուէլը եւ դուրս գնաց քրօջ հետ. . .





Ե.

ՆԱԽԸՆԹԱՅ ԳԼԽԻ ՍԿԻՋԲԸ

աբաթ երեկոյին Հաւաքարի մէյդանից մօտիկ տներից մինի պատշգամբի վերայ նըստել էր Արութիւնը եւ անակընթարթ նայում էր մէյդանում անց ու գարձ անող մարդկանցը, որոնցից որը գըրօշկումը նստած, փափախը թեք գրած, պապիրոսը բերնին՝ շտապեցնում էր գրօշկապանին, որը ոտով էր վազում դէս ու դէն:

Քիչ քիչ մութը վրայ հասաւ, մէյդանի

չորս կողմով շարուած դուքաններում սկսան վառուել ճրագները եւ կշեռքները մին քան զմիւսը բարձր ձայնով չրրիկալ: Որն սկսաւ կանչել—Մօթալի. . . կայի մօթալի. . . որը՝ «Խրամուլի. . . խրամուլի. . .» որն էլ «Աբա, ահա, բղաւելով՝ զընգացնում էր կախ տուած փոքրիկ զանգակը եւ կշեռքը դարտակ չրրիկացնում. . .

Ով ինչ բարիք որ ունէր վաճառելու, իւր ձայնի ուժովը հրաւիրում էր գնողներին: Կանաչի ծախողն անգամ իւր ձայնի բոլոր ուժը մի տեղ հաւաքած բղաւում էր—Լաւ կանանչին, լաւ կանանչին, օ-հօ-հօ-հօ. . . սրան է. . . : Մի բարակ եւ քաղցր եղանակ միայն մանրունքի խանութների առջեւից էր լսվում, ուր նստած էին երեխայք, եւ մի սեղան՝ խունկ ու մոմ վերան՝ առջեւները դրած՝ հրաւիրում էին տուն գնացող պարոն ուստաներին, որ խունկ ու մոմ առնեն եւ հրաւիրում էին երգելով՝

Համեցէք, ուստէք,

Խունկ ու մոմ տարէք

Հոգու վարձք արէք. . .

Այսպէս՝ բարակ ու հաստ, քաղցր ու կոպիտ, բարձր ու ցածր ձայները դրօշկաների գոգուողի ու զանգակների զօղանջիւնի հետ խառնուած՝ դրմբացնում էին քաղաքը եւ ապշեցնում Արութիւնին։ Այն՝ որ մի նուրբ ճաշակ ունեցողին կարող էր ձանձրութիւն պատճառել, Արութիւնին հիացնում էր։ Նա ինքն իրան մոռացել էր եւ դեռ եւս շատ կընստէր դրսումը, եթէ ներսից Օվակիմը չըկանչէր նրան։

— Արի՛ ներս, Արութիւն, արի, ասաց Օվակիմը. ես էգուց քեզ կըտանեմ քաղաքը ման կածեմ, ինչ կայ, չըկայ, գիտի էլ կըտեսնես։

Վեր կացաւ Արութիւնը եւ մտաւ ներս, ուր տէր հայրը նստած էր տախտի վերի ծայրին։ Տախտի գիմաց դրուած էին մի քանի հասարակ աթոռներ եւ մի գրասեղան։ Արութիւնը նստեց գրասեղանի մօտ, ուր մի քանի հատոր դրքեր կային դրուած։ Արութիւնը հետաքրքրութեամբ նայեց գրքերի վերնագրերին, նրանցից մէկը վերցրեց եւ սկսեց լուռ կարդալ։ Գիրքն հասարակ բարբառով էր գրուած։ Առաջին անգամ պատահելով իրան բոլորովին հասկանալի բարբառով գրուած մի գրքի, Արութիւնը չը-

կարողացաւ իւր զգացած հոգեկան զուարճութիւնն այնքան ծածկել, որ Օվակիմը չընկատէր։

— Արութիւն, ես տեսնում եմ, որ քեզ շատ գրաւեց էդ գիրքը, աբա մէկ բարձր կարդա, տեսնեմ ի՞նչպէս ես կարդում։

— Ո՞ր երեսից սկսեմ, հարցրեց Արութիւնը։

— Հէնց էդ կարդա, ինչ որ կարդում էիր...

Արութիւնն սկսեց կարդալ հետագայ տողերը.

«Քաղաք որ մտնում եմ, հէնց իմանաս, թէ աշխարհք սուլ ա ընկել. էլ ոչ խէր կայ, ոչ բարաքեաթ։ Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ հում դուռը գընաս, հում ձեռքդ դէմ անես։ Բազի վախտ էլ տեսել եմ՝ որ դուքաններումը կիտուկ կիտուկ մանէթները, ոսկին ածած՝ ամեն մէկ փող համբրելիս՝ էնպէս գիտես՝ թէ փողատիրոնջ հոգին հետն ա դուս գալիս, էնպէս են սրսրթում իրանց խազինի վրայ, հէնց իմանաս՝ թէ առաջներիցը թեւ կառնի, կըթռչի։ Մէկ ձեռքդ դէմ արա, շան որթի ըլիմ, ոչ մէկ բուռը հողի արժանանամ՝ թէ սուտ ըլիմ ասում։ Աստուած, երկինք, գետինք, ծով, ցա-

մաք, մէկ ծեղ էլ չեն տալ, որ աչքդ կոխես: Թո՛ւհ, մարդ իրա հոգին պէտք է ծախի, որ փողի թամահ անի: Հազար տարի էլ՝ որ քու ազիզ սիրելու դռանն էլ՝ շինքդ ծռես, կանգնես, սուլու մեռնիս, հազար տարի անօթի փորով զիւտաս, մէկն էլ ա քեզ տուն չի կանչիլ, մէկ սառը ջուր խմացնիլ:

«Են մարդն էլ՝ որ քու տանը կերել, խմել, ամսով, տարով քու աղ ու հացի վրայ է ելել, աչքը աչքիդ առնելիս՝ հէնց գիտես՝ թէ գուլով խփեցին: Եղեն ա քեզ դէմ անում, ու աչքը քամակը գցում: Տօ, փողդ էլ ջհանգամը գնայ, դու էլ, տօ, զուռումսաղ, ասենք թէ աչքդ ա քօռացել, ինձ չես ուզում՝ որ ճանաչես կամ սուխրիդ զրաղը նշանց տաս, տօ, գլխիդ քար ընկնի, ինչ կերել ես, քթովդ դուս գայ, խնդրել եմ Աստուածանից՝ զահրը մարլի, էն գլխիւմը առաջդ գայ, աչքերդ բռնի, տօ, մէկ բարով—Աստծու բարին էլ ա գլխիցդ զհաթ էլել, որ դունչդ ցցում ես, ու եդ փախչում: Մէկ բարի լիս, բարի օր էլ ա տուր է. հօ բերնիցդ քրէհ չեն ուզում, ինչ ես քարացել, էդ էլ հօ փողով չի, այ փողակեր, հողակեր. . .

— Եդ ինչ գիրք է, հարցրեց տէր հայրը, միջահատելով Արութիւնի կտրդալը:

— «ՎԵՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ», — պատասխանեց Օվակիմը վերք բառին մի դաւակցական ձայն տալով—դա մի շատ պատուական գիրք է, նոր է տպուել, բայց ափսո՛ս, որ մեր ժողովրդի մէջ չի տարածվում էդպէս գիրքը:

— Թէ որ էժան է, ես մի հատ կառնեմ, եւ կարծեմ ամեն մարդ էլ կառնի:

— Բանն էժանութեան վրայ չէ, տէր հայր, մեր ժողովրդի ճաշակը խանգարուած է, նա սուացել է մթնասէր ու խաւարասէր բնութիւն, նրան եթէ էնպէս բան է ասվում, որ իրա խելքիցը բարձր է ու ինքը չի հասկանում ոչ նրա լեզուն, ոչ միտքը, բերանիցը ջուր է գնում, զմայլում, զարմանում է, գովում, բարձրացնում, թէ տեսէք, էնպէս բան ասեց, որ ոչով չըհասկացաւ, բայց եթէ իրան օգտւո, հասկանալի ու խելքիցը մօտիկ բան ես ասում, ծիծաղում է վերադ, ասում է, էդ ո՞վ չըգիտէ, որ էդպէս է, էդպէս հէքեաթներ ես հազարը գիտեմ. . . Բայց, իհարկէ, երբ որ էդպէս գրքերը կըշատանան, մեր նոր

սերնդի աչքը կըբացուի, կըտեսնի, որ հնիցն էլ օգուտ չըկայ, գրաբառը յետ կըբաշուի, իր տեղն աշխարհաբարին կըտայ, էն ժամանակը էդպէս գրքերն էլ կըստանան իրանց վայելուչ յարգն ու պատիւը: Դրա գրողը մի ճշմարիտ ազգասէր, մի երեւելի տաղանտի տէր մարդ է եղել: Պէտք է մի հարիւր տարի անց կենայ, որ էդպէս մի գրող էլի դուրս գայ հայերից: Ով որ մօտիկ ծանօթ է մեր ժողովրդի կեանքին, մի զարգացած խելք ու միտք ունի ու սիրող սիրտ, միայն նա կարող է հասկանալ, որ էդ գրքի խօսքերը հեղինակի սրտի արիւնոյն է գրուած: Էդ հեշտ բան չէ, բայց ռամիկ ժողովուրդը ծիծաղում է էն խօսքերը կարդալիս, որ հեղինակի աչքերից արտասուեք են բերել . . . Է՛հ, ինչ եւ իցէ . . . Դու, Արուսթիւն, հաւանում ես էդ գիրքը:

Արուսթիւնը ոչինչ չըխօսեց, բայց այն անմեղ ժպիտը եւ ամօթխածութիւնով լի անկանոն շարժումները, որ նա երեւացրեց, դա նշան էր խորին համաձայնութեան . . .

— Քեզ եմ բաշխել էդ գիրքը, ասաց Օվակիմը, — քանի որ փոքր ես, էդ գիրքը քեզ համ

կուրախացնի, համ կըտրտմացնի. բայց երբ որ կըմեծանաս, էն ժամանակն էլ ուրիշ տեսակ մտածմունքների մէջ կըձգի քեզ . . .

Արուսթիւնն իր հոգու մէջ անչափ շնորհակալ եղաւ Օվակիմից, բայց բերանացի չը կարողացաւ արտայայտել:

Այս միջոցին ներս մտաւ Օվակիմի կինը՝ Սօփիօն, նրա հետ մտաւ եւ մի ուրիշ ջահէլ կինարմատ, մաքուր ու պարկեշտ հագնուած, քնքուշ ու գեղեցիկ դէմքով, եւ գգուեց Արուսթիւնին մի այնպիսի ջերմ սիրով, որպիսին սակաւ եղբայր ստացած կըլինի իր քրոջից: Այո՛, անծանօթուհին Արուսթիւնի քոյրը՝ Օսանան էր, որի աչքերի յորդ արտասուքը, քաղցր ժպիտի հետ խառնուած, ցոյց էր տալիս նրա ուրախութեան յուզմունքի անչափութիւնը: Մի քանի րոպէ տիրեց լռութիւն, եւ ապա խօսեց Օսանան եւ խնդրեց տէր հօրից, որ թոյլ տայ Արուսթիւնին իր մօտ տանելու: Տէր հայրը կատարեց նրա խնդիրը, եւ մի քառորդ ժամ չանցած, Արուսթիւնը դուրս եկաւ Օվակիմի տանից՝ մի ձեռքում «Վէրք Հայաստանին» բռնած, իսկ միւս ձեռքը իր քուռըր տուած. . .

— Օվակիմ, էդ աղջիկը ձեռքիցս չքելի՞մ
Սրութիւնիս, հարցրեց տէր հայրը, երբ որ
քոյր ու եղբայր դուրս էին եկել արդէն. . .

— Խլում են, թող խլեն, ի՞նչ ես դարդ-
անում, ասաց Օվակիմը. էստեղ քաղաք տեղ
է, նրան շատ չեն պահիլ: Շատ էլ որ ուզե-
նայ Օսանան, նրան ո՞վ մտիկ կանի: Նա մի
սկեսուր ունի, որ Աստուած ազատէ, գեան-
ջեցի է՝ քաղքցի դառած. որ մի բանի վերայ
խօսում է, էլ չի լուում. . . Ձէ, տէր հայր,
նա գեղի տղայ է, կուշտ ուտել ու խմելու
սովոր. էստեղ նրան ո՞վ էնքան հաց կըտայ,
որ նրա աչքը կշտանայ:

— Խ՞նչ է ասում, քան, մէջ ընկաւ Սօփիօն.
մաշ ինչիլի հիմի ո՞վ է պահի նրան, գանա
չի՞ն կանայ էստի էլ պահի. . .

— Պահիլ էլ կայ, պահիլ էլ. մարդ իրա
երեսին հօ չի դէն գցիլ: Իրանց գեղումը մի
երկու այբ-բեն էին սովորեցրել, էլ ուրիշ բան
չըգիտէին. մէկ օր տաւարն էին ուղարկում,
միւս օր հորթեր, մէկէլ օր գութան. էսպի-
սութիւնով նա էլածն էլ մօիցը կըքցէր, թէ
որ՝ նրա բախտիցը՝ տէրտէրը չէր պատահել:

Ահա չորս տարի է, որ տէրտէրի մօտն է,
դեռ նրա հէրը մի թերթ թուղթ չի առած
նրա համար. . . Մէրը շատ խելօք, ժրագլուխ
կնիկարմատ է. թէ մի բան արել է, էլի նա
է արել. բայց հէրը ոչինչ բանում չի խառնուել. . .

— Ես էլ էնէնց իմ իմացի, վուր շատ
խելօք դէդա ունէ կօսէ Օսանէն:

— Ես նկատել եմ, տէր հայր, որ գեղի
կնանիքը աւելի շատ բան են շինում, քան թէ
տղամարդիկը. բայց ինչ որ Հովսիսիմէն է ա-
նում, հարիւրից մէկը կարող չէ անել: Քանի
անգամ ես նրանց տանը պատահել եմ, շաբ-
թով, ամսով կացել եմ, մի բոսէ ես նրան
պարապ չեմ տեսել: Մի բան մանաւանդ, որ
աչքովս է ընկել, ես շատ եմ հաւանել, իբրեւ
նրանց անընդհատ աշխատութեան մի օրինակ,
որ՝ ի հարկէ՝ դու էլ կրլինիս նկատած, բայց
քեզ զգալի չի լինիլ եղած. . . Կուժը շալա-
կած ջուրը գնալիս՝ ձեռքները չեն ուզում պա-
րապ թողնել, — գուլբա գործելով են ֆնում:
Կամ երբ որ աղբիւրի նօթաթը ուշ է համնում
իրանց, նրանք պարապ ու անգործ չեն կանգ-
նում. էդ միջոցին էլ կամ գուլբա են գործում,

կամ իլիկ մանուկ . . . Գիւղերումը առհասարակ ծոյլ տղամարդիկ խիստ շատ կան, բայց ծոյլ կնիկարմատ շատ հազիւ կը պատահի: Խօսքս մասնաւորօրէն մօր Վերայ, որ մեր Սօփիօն իմանայ, թէ նա ինչ է անում:

«Մանդր երեխանց տէր, աղջկակոխ էլած, հիմի արի նրանց շորերը կարիր, կարկատիր, Լուա, թափ տուր, հագցրու, տունը սրբիր, տեղերը գցիր, հաւաքիր, օրը երկու թոնիր հաց թխիր, կուժն ուսիդ դիր, գնա հեռու գետիցը հինգ վեց անգամ ջուր բեր, կերակուրն եփիր, մշակներին, հէրերին հաց տուր, տանըցոյ գլխները շաքաթը մէկ անգամ լուա, երեխանցը լողացրու շալակով բերած ջրովդ, մարդի ոտներն ամեն իրիկուն լուա, տրխնին հանիր: Հիմի արի աղջկերանցդ համար բաժինք շինիր, չուալ, խալիչա, կարպետ, խուրջին, մափռաշ, աղաքսակ, մէզար, ջէջիմ, դջարի գործիր, նօքարի ու տղէրանց համար հորագործ շալ ու շալվար գործիր, մարդի համար՝ տափագործ. ներկիր, կարիր, հագցրու. . . Հիմի արի ճիճու պահիր, աքրեշում քաշիր, քեզ համար ու աղջկերանցդ հա-

մար աքրեշումէ դերիացու գործիր, տղէրանց համար շապկացու, գօտկացու. . . Հիմի արի կովերը կթիր, հորթերը կապտոիր, դուրս արա, օրը մէկ-երկու խնոցի հարիր, եղը հալիր. . . հիմի կալի-կուտի ժամանակ է, գնա արեգակի տակին, երեխէն ձեռիդ, կանգնիր, կամը քշիր, եղիր, հաշան արա, քամելուն օգտիր, կալը սրբիր, պաճն աւուլ քաշիր, քոչաքն խտըկիր, ցորենը շատարարի, աղումի համար խախալիր, տեփրիր, քարերը ջոկիր, ձաւարի համար ընտրիր, ծեծիր, քամիր, աղա. . . Հիմի բաղաքաղի ժամանակ է. . . Հիմի սար պէտք է գնալ. . . Ե՛հ, ինչ եմ ասում, որ մի շաքաթ օր ու գիշեր ասեմ, էլի նրա արածի համառօտ ցուցակը չի կազմուիլ: Գեղի մէկէլ կնանիքն էլ, ներքի թաղիցն սկսած մինչեւ վերի թաղը՝ խեղճին չեն հանգստացնում: Մէկն ասում է՝ մի արի մինթանաս ձեւիր, մէկն ասում է՝ մէկ արի ջեջիմն հինիր, որն էլ գալիս է՝ թէ ասպս մճճուել է, մէկ արի շոկիր, էսպէս հազար ու մի բան: Որ մի չը մտածող ու անգէտ կնիկ լինէր, կասէինք՝ Ե՛հ, ինքն էլ չի իմանում, թէ ինչ օրում է, բայց

չէ՛ նա տէր Օհանի թոռն է, Հեղինէ կուսի քուոր աղջիկը: Լուսահոգի Հեղինէն մի աշխարհք ման եկած շնորհքով կուս էր, նրա ձեռքն է մեծացել: Ղորդ է, գիր չըսովրեցրեց, որ կուս չըգառնայ էն սիրուն շարմաղ աղջիկը, բայց անգիր աղօթքներ էր սովորեցնում, ու կար, ձեւ, գործ, որ Հեղինէն լաւ գիտէր: Նրա կարովի սրբերի պատկերները որ մարդ տեսնի, կրմնայ զարմացած:

— Գէթաղվա՛ն. . . բացաբանչեց Սօփիօն, էլ չիս գիտի՛ իմքին, վուր ասիս, թէ էլի ինչ է անում. . . մաշ էդ թաւուր աղջիկը ինչի՛ մէ լաւ մարդու չէին տալի . . .

— Ինչի՛, ի՛նչ պակաս մարդ է Աւետիքը: Կուզե՛ս պատմեմ թէ ի՛նչպէս է ուզել նա էդ աղջկանը . . .

— Ափսոս չէ՛ Աւետիքը, շատ պատուական մարդ է, ասաց տէր հայրը, նրա պէս անունով, նրա պէս աղուհացով, նրա պէս հասկացող ո՞վ կայ մեր գեղերումը:

— Բայց Աւետիքն առաջ էդպէս չէր. նա առաջ ուրիշ գազան էր, հիմա ուրիշ: Մի բան որ նրանում չի փոխուել, այդ նրա բռնակա-

լութիւնն է. առաջ զէնքով էր բռնանում մարդկանց վերայ, իսկ հիմա՝ խօսքով, գաղափարով կամ աւելի ուղիղն ասած՝ մոլեռանգութիւնով. . . Ես ու նա կաթնեղբայր ենք. ես նրան շատ լաւ եմ ճանաչում: Ես մի ամսական եմ էլել, որ իմ մայրը վախճանուել է. նրա մէրն է ինձ ծիծ տուել, պահել. ողորմի իրան, լուսահոգին մի բոյով բուսաթով կնիկարմատ էր. տղամարդից յետ չէր մնալ, էնքան ուժով էր: Շատ անգամ, որ խօսք էր բաց ըլլում, ասում էի. «ինձ քիչ ես ծիծ տուել, Աւետքին շատ, էնդուր է նա ինձանից ուժով»: Խեղճն ասում էր. «Ես միշտ մի ծիծաքու բերնումն էի գնում, մէկէն Աւետքի, բայց նա շատ նախանձոտ երեխայ էր, միշտ երեսդ չանգռում էր, չէր թողնում, որ հալալ ծիծ ուտես». . . Ես նրանց տանն եմ մեծացել երեխայ ժամանակս. էն ժամանակը նրանք էլ, մենք էլ Գօրի էինք: Յետոյ մենք եկանք քաղաք, հէրս Աւետիքին էլ ինձ հետ բերաւ. Հաւաքարի մեծ տէր Օհանի մօտ աշկերտ տուաւ, որ գիր սովորենք: Խեղճ հէրս ուզեց, որ ինչպէս նրանք ինձ լաւութիւն են արել:

պահել, մեծացրել, նա էլ փոխարէնը Աւետ-
քին ուսման տայ, մարդ շինի: Բայց Աւետիքը
գէր սովորելու ոչ սէր ունէր, ոչ հաւէս. երբ
որ մի թուր կամ թուանք էր տեսնում, սիր-
տը թռթռում էր. երբ կրկնի, ասում էր,
որ ես էլ կունենամ թուր ու թուանք. երբ
կրկնի, որ մի լաւ ձի ունենամ, լաւ ետրադ,
ասպաբ: Տէր Օհանն էլ աշակերտի սրտի մէջ
ուսման սէր գցելու ոչ շնորհք ունէր, ոչ կամք.
Նա մի կատարեալ դահլիճ էր աշակերտների
համար: Ժամանակն էդպէս էր պահանջում,
նա էլ իր ժամանակի մարդն էր: Մէկ օր
փալախկայ գցեց Աւետքի ոտները, չար Աւե-
տիքը քիչ մնաց թէ կատաղի. փրայ ընկաւ
միջիցն էնպէս քաշեց, որ տէրտէրի աչքերիցն
արտասուք եկաւ: Տէրտէրը դեղնեց, սիրթնեց,
թէ՛ «էս լաւ նշան չէ, սա մարդասպան կը
դառնայ»... Բռնել տուաւ Աւետքին մէկ լաւ
ծեծեց, յետոյ դուրս արաւ: Նա էլ կարծես
էդ էր ուզում. փախաւ գնաց, էլ յետ չեկաւ:

«ձշմարիտ է, Աւետիքը գեղումը մեծա-
ցաւ, բայց էնպէս մի տղայ դառաւ, որ ամենքն
էլ նրա արեւուն էին երգում ուտում: ուրիշ

գեղ գնացած ժամանակն էլ մէկ մէկու մա-
տով էին նշանց տալիս. մի խօսքով՝ մի գեղ
էր, մի Աւետիք: Հասան-Նանի տարին նա
Շուլալրեցի Սօսի աղի աջի կուռն էր: Երբ որ
քուրդ ու զղբաշ չափմիշ արին, թալանեցին
Ռատեւանայ Նէմէցներին, նրա չորս կողմի
գեղերի ժողովուրդը փախել էին հաւաքուել
Դաղէթի տակը, Խրամումը: Աւետիքն էլ իր
ընկերներովը դրսից ամեն բան հասցնում էր
նրանց, որ քաղցած չըման: Հարս ու աղջիկ,
ծեր ու պառաւ, ամենքն էլ փրկի տեղ էին
դնում նրան, սիրում, պաշտում: Նա էլ հէնց
աշխարհքի էդ իսառնուած ժամանակը մէկ
օր Խրամումը տեսնում է Հոռումսիմին մի քա-
նի աղջկերանց հետ, արիւնը գլուխն է ընկ-
նում, քիչ է մնում թէ ձիուցը վէր ընկնի:
Վէր է գալիս ձիուցը, աղջկայ կուռը պինդ
բռնում: Նրա կշտի աղջկէքը, որ Աւետքից
էդպէս բան չէին սպասիլ, երբ որ տեսնում
են, թէ նա ուզում է փախցնել, փազում են
իմաց տալիս նրա ազգականներին: Հոռումսիմը
մի քիչ հառաք զօռա է անում, որ Աւետքի
ձեռիցն ազատուի. նա ասում է՝ անմեղ մի

չարչարուիլ, ես էնպէս զուգըմն չեմ, որ ձեռքս ընկած ճուտը բաց թողնեմ: մի վախենալ, ես քեզ չեմ փախցնելու, միայն ինձ ասա՛, տեսնեմ դու ո՞ւմ աղջիկն ես, որ էդքան սիրուն ես, անումդ ի՞նչ է, ես քեզ պիտի ուզեմ, ինձ չես հաւանում: . . Սղջիկը նրան պատասխան չի տալիս, այլ միայն աղի՛ ու ամի՛ է կանչում, որ օգնութեան հասնեն. . . Վերջապէս գեղըցիք հասնում են, որ ձեռքիցը խլեն, հէնց կարծում են, թէ ուզում է փախցնի, բայց Աւետիքը հէնց որ նրանց տեսնում է՝ ամաչում է, խեղքը գլուխն է բերում, ձին նրստում, հեռանում: . .

«Կարմրատակած Հոռոմսիմին որ տեսնում են նրա ախպէրքը՝ կատաղում են, ուզում են հասնեն Աւետիքին գիւլլախոշով անեն, բայց նրանց մէրն ու կուտը, որ վաղուց աչքադրած են ըլում Աւետիքին, արգելում են նրանց, չեն թողնում որ մի վատ բան ըլի: Աւետիքն էլ իմանում է, թէ նա ով է, ով չէ, իր մէջ փքվում է, որ էնպէս լաւ աչք է ունեցել եւ հէնց էն օրը մինից մի մատանի է առնում, տալիս մի պառաւի, թէ տար

նշան տուր: Նշանը սիրով ընդունում են մէրն էլ ախպէրքն էլ, միայն նրանց հօրեղբայր Արզումանը, որ իրանց տան մեծն էր, շատ ջգրվում է, թէ ինչու իրան մարդի տեղ չեն դրել, չեն գնացել մի քանի ալեւոր մարդիկ իրանից խնդրել, թէ՛ «ուզում ենք ձեր օջաղիցը մի բուռը մոխիր վերցնենք»: . . Բայց լուում է, որովհետեւ ժամանակն էնպէս էր, որ շունը տիրոջը չէր ճանաչում, մի գիւլլա էր նրա ջսնը, եթէ ընդդիմանար. . .

«Յետոյ, երբ որ ժամանակը հանդարտվում է, ամենքն էլ քաշվում են իրանց գեղերը, իրանց տները, հարսանիքների ժամանակը որ գալիս է, «ձանապատէքի» իրիկունը Աւետիքը մի ոչխար է ուղարկում, վերջն ինքն էլ է գնում, որ տեսնի ինչ պիտի տայ: Հացը որ ուտում են պրծնում, ասում է՝ «դէ ասեցէք, ի՞նչ պիտի տամ»: Ախպէրքն ասում են՝ «Մենք քեզանից ոչինչ չենք ուզում, Աստծու տուածիցը մենք ամեն բան էլ ունինք, կիսին չենք արժանի, մեր քուտը չենք ծախիլ: Մենք էլ, է՛հ, որքան կարող ենք, մեր քուտը չենք գրկիլ»:

«Բիձայ Արզումանը, որ Աւետքի արարմունքը դեռ չէր մարսել, հիմի էլ արխայինն էր ընկել, աչքերը մէկ էնպէս օլորում է իր ախպօր տղերանց վերայ, որ նրանք քիչ է մընում թէ պատերիցը կպչեն:— Դուք ո՞վ էք, ասում է, ո՞ւմ շունն էք, ի՞նչ իշխանութիւն ունիք, որ մէջ էք ընկնում, աղջիկ մարդու տալիս, որ կամ առնէք, կամ չառնէք, ո՞ւմ աշխատանքիցը պիտի ձեր քուոր համար բաժինք անէք» . . . ու էսպէս շատ բաներ: Ամենքն էլ մնում են լուռ ու մունջ նստած: Աւետիքը չի ուզում ցոյց տալ, որ նրա խօսքերը գիւլլի պէս դիպան իր սրտին, սառը սառը հարցնում է. «Դէ դու ասա, բիձա Արզուման, ի՞նչ պիտի տամ» . . .

«Արզումանը տէրողորմեան հանում է ջրբիցը ու մօրուքը տմբացնելով՝ ասում.— Մէկ լաւ մնացու՝ չաղ ու զըսր կով, մի լաւ դօջ էլ հետը»: Ասում է ու տէրողորմեան էլ հետը չըխկացնում, իբր թէ հաշիւ է անում, կովի վրայ ոչխար է աւելացնում: «Հարկը թունգի Շուլաւէրու լաւ գինի»: Իրանց գինին աւելի լաւ է, բայց էնպէս է ասում, որ Աւետիքը

գնայ նոր մէկանց փողով գինի առնի: Հարսնախպօր համար մի լաւ մահուդ չուխա, քըսանըհինգ մանէթանոց»: Դինն էնդուր է ասում, որ եթէ չուխէն էժանագին լինի ու չըհաւնի, յետ դարձնէ, քսանըհինգ մանէթն առնէ: «Հարսնամօր համար մի լաւ քաթիբա՝ երեք թումնանոց: Տասներկու ջուխտ Գեանջու սաղրի քօշեր բարեկամ կնանքոնց համար: Հինգ թուման սիպտակ արծաթ: Մէկ էլ ինձ համար մի շիրմայի մրքի սանդր կառնես, կըգաս ձեռս կըպաչես, կասես մեղայ Աստուծու, ես էլ ձեզ կօրհնեմ, կերթաք ձեր մուրազին կըհասնէք» . . .

«Աւետիքը զօռով բերնին հուկ է տալիս, մինչեւ Արզումանը պրծնում է իր հաշիւը, բայց որ «մեղայ Աստծուն» էլ վերջիցն է կպցնում, Աւետքի աչքերն արնով լցնվում է: Էսպէս ժամանակը մեր գեղացիք կամ առհասարակ բոլոր անկիրթ մարդիկը բանական արարածներ չեն, այլ խօսուն գազաններ, արջ, գայլ, վարազ . . .

«Աւետիքը վեր է թռչում տեղիցը ձեռքն էնպէս շրջխկացնում է խանչալի դաստին, որ

բոլոր տան երեխէքն ու հարսները տան պու-
ճախներն են պրծնում. . . . Գողում է Աւե-
տիքը. — Դու ո՞վ ես, որ ես քեզ մեզայ ասեմ,
ես խալի տէրտէրին մեզայ չեմ ասում: Ես իմ
հօր տղէն եմ, քեզ պէս մարդի գլուխը ինձ
համար մի սոխ չափ է. ոչինչ չեմ տալու, աղ-
ջիկն էլ տանելու եմ: Թէ որ զօջաղ մարդ ես,
չլտաս: Էս գիշեր քեզ ժամանակ, մենք էգուց
կըհանդիպենք մէկ մէկու» . . . Էս ասում է
Աւետիքն ու կատաղած դուրս ընկնում: տան
դուռն էլ էնպէս չորխկացնում է, որ դուռը
կրնկահան է ըլում, վեր ընկնում: Դրսումը
շները վրայ են թափւում, որ մի լաւ քրքրեն,
Աւետիքը մթնումը խանչալն աղամ աղամ է
անում, դիպչում է շներին, առիւծի պէս կը-
ծատողները կլանչելով վեր են թափւում:

Արդումանը որ իր ամեն մի կծոտողին
մի սուրու ոչխարի հետ չէր փոխիլ, երբ որ
տեսնում է կորտած վեր ածած, էն սհաթին
հրամայում է իրանց թուրք նօքարներին, որ
ձիաները թամբեն: Ասում է՝ «Ես էս աղջիկը
կըտանեմ Շորագեալու թոսովներումը մարդի
կըտամ կամ թէ չէ՝ կըտանեմ ջուրը կըքցեմ,

էդ գաղան մարդասպանին չեմ տալ» . . . Տան
մեծն ինքն էր, ով կըհամարձակէր նրա ձեռ-
քիցը բռնել: Ասելն ու անելը մէկ է անում:
Մօտ կէս գիշերին նրանք ճանապայ են ընկնում,
թէ չէ՝ մէկը գնում է Աւետիքին իմաց տալիս.
«Քու տունը քանդուի, ասում է, վեր կաց,
նշանածդ փախցրին»: Էս որ լսում է քնաթա-
թախ Աւետիքը, փափախն էլ է մոռանում,
տրինին էլ, դուս է ընկնում գփռածի նման
շապկանց, ոտ ու գլուխը թաց, էն ցուրտ կէս
գիշերին, վաղում է մի քանի տան հերթից
իմաց է տալիս իր ընկեր տղերանցը, «հասէք,
ասում է, նշանածս ձեռիցս խլում են»: Մին-
չեւ նրանք վեր կըկենային, թուանքի աղջո-
թուն, բանին մտիկ կանէին, Աւետիքը վաղում
է, գոմիցը տկոր ձին դուս քաշում, նստում
ու դուրս թռչում գեղամիջովը: Թռած տեղը
ձեռքը գցում է մի չափարի միջից մի մեծ
բհիր է հանում, որ նրանց հասնելն ու մի
երկու թուրք նօքարի խփելը մէկ է անում:
Հէնց որ նրանք վեր ընկնում, «վայ մեռայ»
կանչում, մէկէնները փախչում են ցաքուտումը
թաք կենում: Մէկ էլ որ բհիրն ուղղում է վրայ

բերի Արզումանի գլխին, Հոռոմնիմը, որ նրա
թարբին նստած է ըլում, թռչում է Աւետքի
շնքովը կախ ընկնում, «Քեզ մատաղ, ասում է,
արին մի անիլ»։ Աւետիքն էլ բարձրացնում
է Հսոռոմնիմին դնում է իրա թարբին, յետ
դառնում։ Հէնց էդ միջոցին նրա ընկերներն
էլ ասլանների պէս դուրս են թափվում մէ-
րուցը, որը ձիով, որը ոտով, հայ որտեղ է,
հայ ուր է, կանչում. . . Աւետիքը նրանց
հանդարտեցնում է, չի թողնում, որ Արզու-
մանին դիպչեն։ Ասում է, որ էն թուրքերին
էլ վերցնեն տանեն, որ մի վնաս չըլի։ Նրանք
էլ որը չուխէն է տալիս Աւետքին, որ չքմիսի,
որն իր փափախն է դնում նրա գլխին . . .
Մի շաբաթ էր դիւի սրա վրայ էին խօսում,
յետոյ շուտ արին պսակեցին, որ գեղըցիք մի
քիչ հանդարտուին։ Այ ինչպէս է ուզել նա
էդ աղջիկը, Սօփօ ջան, վերջացրեց Օլակիմը
ծիծաղելով։

— Մաշ դուն ասում իս, կնիկը նրանց
համա գրօշ չափէ . . . Լաւ կի դաւի դա-
ռաբա ին էլի սարքում կնկայ համա ու . . .

— Ի հարկէ, գրօշ չափէ։ Ամեն օր հօ

ջահել չի մնում մարդ, միշտ հօ մի խելքի
չի մնում, չէ՞ որ մարդի խելքն էլ է փոխվում,
նրա վարմունքն էլ։ Պսակուեց թէ չէ՝ իրա
ծերունի հայրը, որ մինչեւ էն ժամանակը ոչինչ
չէր խօսում, տան մեծութիւնը նրան էր տուել,
ինքը մի կողմ քաշուել, հիմի սկսեց քարոզ
կարգալ նրա գլխին ու խրատել։ — Որդի, ա-
սում է, ինչ որ ես արել եմ, դու ոչ կարող
ես անել, ոչ կարող ես մտքովըդ անց կացնել։
Չէ, որդի, ասում է՝ աննպատակ զօջաղութիւնը
մի տեսակ աւազակութիւն է, էդ լաւ բան չէ։
Հիմի կնկայ տէր ես դառել, էգուց էլօր որ-
դոց տէր կըդառնաս, նրանց պահել, պահ-
պանել է հարկաւոր։ Բաղդդ մեծացրու, տա-
ւարդ աւելացրու, զօնաղ սիրի, խելքի օգնիր։
Թէ որ ուղում ես անուն ունենաս, հացով
կաց, հացի ձէնը Հնդստան կըհասնի։ Ժամ
գնա, աղօթք արա, հաղորդուիր . . .

«Տէր հայր, էդ ծեր մարդը, Աւետքի
հէրը՝ Վէրդին՝ կարելի է տեսած կըլինիս,
մի տարօրինակ մարդ էր։ Նա տարին մէկ
անգամ էր մոնում ժամ, որ հաղորդուի, մը-
նացած ժամանակը ժամի դրսումը մի փռշի

Ծառ կար, միշտ էն ծառի տակին էր կանգնում: Մեռնելու ժամանակն էլ կտակ արաւ, որ իրան էն ծառի տակին թաղեն: Էնպէս էլ արին: Յետոյ եկեղեցին վերանորոգելիս մեծացրին, նրա գերեզմանն ընկաւ եկեղեցու խորանը: Էն մարդը, որ կենդանի ժամանակը եկեղեցի չէր մտնում, մեռնելուց յետոյ մշտապէս ընկաւ եկեղեցին: Նա գրագէտ մարդ էր, որ մի զարմանալի բան էլ էր էր, որովհետեւ հասարակ գրագէտ չէր, Հայոց պատմութեան տեղեակ մարդ էր, մինչ դեռ նրա ժամանակի հոգեւորականները պատմութիւնից ոչ մի տեղեկութիւն չունէին: Նա մեր վարդապետներին այքով այք չունէր տեսնելու: Ասում էր «մեր ազգի տունը սրանց ձեռին է, բայց չեն շինում, քանդում են . . .» Իրա մասին ինքը ոչինչ չէր խօսում, բայց նրա հասակակից մարդիկը շատ բան էին ասում նրա վերայ, որ մի ահագին պատմութիւն կը գառնայ, եթէ մարդ գրելու լինի: Հիմիկտան խաղաղ ժամանակում ապրող մարդիկս մեզ չենք կարող ներկայացնել մեր պապերի ք սշածն ու արածը, մի ժամանակ, երբ մարդու գլուխն ու սոխի

գլուխը մի գին է ունեցել: Սով, սրածութիւն, արհաւիրք, մահտարածամ, փախուստ, գաղթականութիւն, եւ այդ էլ շարունակ. մէկը պակասում է, մէկէն է գալիս, մէկէն անցնում է, միւսն է վրայ հասնում: Հէրս պատմում էր, թէ Վերդին հարիւր մարդից աւելի է սպանել, բայց ինքն ասում է՝ ես միայն մէկ մարդ եմ սպանել, որովհետեւ էդ մէկ մարդուն քնած ժամանակն էր սպանել եւ դրա համար էր ապաշխարում եկեղեցու դրսում. . . Ինչ եւ իցէ, Աստուած որովմի հոգուն, իգիթ մարդ էր . . . Մեր աւետիքն էլ ուղիղ իր հօրն էր քաշել: Քանի որ աղապ էր, ամսով, տարով տանը չէր կենում. մէկ լսվում էր, թէ Երեւան է, մէկ թէ՝ Ղարաբաղ է, մէկ էլ թէ՝ Քարթլ է, որտեղ մի ապստամբութիւն, մի շարժում էր լինում, նա խելոյն հասնում էր: Ուրիշները որ իմանում էր, թէ իր հէրը, պապը շատ քաջ տղամարդիկ են էլել, խանութի բէգերի գլուխ չեն էլել վէր բերելիս, նա գովում էր չօլերն ընկնում, որ քաջութեանում նրանցից անց կենայ, որ չասեն՝ թէ «դու քու հօր տղէն չես», բայց պսակուեց թէ չէ,

էլ տանիցը դուրս չեկաւ, թէ՛ «Իգիթի ապ-
րանքն իր աչքի առջեւը պէտք է լինի»: Սէրի
էդ տաք տաք ժամանակ Հոռոմսիմն էլ սկսեց
նրան քարոզել, հաւատի բերիլ. ինչ որ աղօթք
գիտէր, դիպի էլ սովրեցրեց. սկսեց պատմել
ճգնաւորներից, սուրբերից, մի խօսքով ինչ որ
լսել էր Հեղինէից: Ժամ գնաց, հաղորդուեց.
լուսահոգի տէր Առկասը նրա խղճմտանքն
անհանգստացրեց, մեղքերը շնքին դարսեց,
ծանր ապաշխարանքներ դրաւ վերան եւ էդ-
պէսով էն առիւծ տղային շինեց մի գառը:
Նառ տեղեր էր ման եկել, քիչ շատ քաղա-
քավարութիւն էր սովորել, վրացերէն, թուր-
քերէն ճարտար խօսում էր, ռուսերէն էլ
կոտորտում էր: Մարգամէջ ընկաւ, մարգիկն
սկսեցին պատուել, պաշտել, մողրովի ու նա-
չալնիկի մօտ միշտ նրան ուղարկել, նրան քեօխ-
վայ շինել, նա էլ տեռաւ, որ ոչով իրա չափ
խելք ու շնորհք չունի, սկսեց նրանց գլխին
փիլիսոփայ դառնալ: Նա որ մի ժամանակ
ոչ հաւատ ունէր, ոչ յոյս, որովհետեւ նրա
հաւատն ու յոյսը իր թուրն ու թուանքն էին,
հիմի, ինչպէս կասեն՝ «Օխտը վարդապետի

դադամ բան գիտէ»: Հիմի որ հազար թուման
տաս, նա պար չի գալ, թէ ինչ է՝ պար գա-
լով Օհանէս Մկրտչի գլուխը կտրել են տուել.
ոչովի հետ պռոշտի չի անիլ, իր երեխին չի
պաշիլ, թէ ինչ է՝ պաշելով՝ Յուդան Բրիստո-
սին մատնել է: Մորթ անելը նրան հազար ու
մէկ նզովքներով ու ապաշխարանքներով սր-
գելուած է: Մէկ մարդ, որ էսպէս տուտուց
բաների գերի դառնայ, նրանից էլ ի՞նչ սէր
կարող ես պահանջել, քանի որ սիրալիր յարա-
բերութիւնը նա մեղք է համարում. . .

— Օվակիմ, քո ասածը կարելի է ճշմարիտ
է, բայց իմ խելքումը չի տեղաւորւում: Դու
մեր Աւետքին բոլորովին յիմարացնում ես: Ես
դեռ նրա պէս խելօք մարդ չեմ տեսել: Հիմի
միթէ նա էնքան յիմար է, որ եթէ հասկաց-
նես բանի զօրութիւնը, եթէ հասկացնես ուս-
ման նշանակութիւնը, նա իրա որդուն չի օգնիլ:

— Բանն էս է, տէր հայր, որ մենք չենք
իմանում, թէ ո՞ւմ ենք յիմար ասում եւ ում
խելօք: Աւետիքը յիմար չէ, ես համաձայն եմ
քեզ հետ: Բայց ես կասեմ, որ եթէ նա յիմար
լինէր, աւելի շուտ կը համոզուէր, որ պէտք է

օգնէ իր որդուն, քան թէ հիմա, որ քու
կարծիքով՝ խելօք է: Նա խելօք է, այո՛, նա
յամառութիւն ունի կարծելու, որ խելօք է.
նա կարող չէ կասկածել, որ իր գլխում եղա-
ծը խելք չէ, այլ յամառութիւն, կամապաշ-
տութիւն, ինքնասիրութիւն, մոլեռանդութիւն,
եւ վերջապէս բարբարոսութիւն. սրանց ամեն
ամեն մէկը միւսի հետեւանքն է: Նա քեզ
կասէ՝ որ Սողոմոնն էլ էր շատ իմաստուն,
բայց կռապաշտ դառաւ, կնկանը գլուխ վէր
բերաւ, գժոխք գնաց: Նա քեզ կասէ՝ որդին
հօր հոգուն ոչ մի շահ չի տալ: Գրիգոր Լու-
սաւորիչը, որ մեր հաւատի գլուխն է, չրկա-
րաց իրա հօրը գժոխքիցը հանել էր, էնքանն
արաւ միայն, որ գժոխքի ոխնը ականջիցը հանե-
ցին, աչքումը դրին: Յիմար ու տգէտ մարդոց
գլխումը էսպէս առասպելներ չրկան, եւ ես զար-
մանում եմ, որ ում գլուխը որ քացախով ու դար-
մանով լիքն է, նրան իսկ օք են ասում. . .

Տէր հայրը Օվակիմի խօսքերի մէջ տես-
նելով իր պատկերը՝ լռեց. այդ նկատեց Օվա-
կիմը եւ ուզենալով փոքր ինչ մեղմացնել իր
ասածները, աւելացրեց—

— Ի հարկէ՝ ես շատ էլ չեմ մեղադրում
Աւետիքին. նրա նախապաշարմունքները էնքան
զօրութիւն չունին, որ կարողանան Սրութիւնի
ուսման առաջը փակել, եթէ միայն նրա սրտի
մէջ կրնկնի մի ուսումնասիրութեան կայծ:
Բայց եթէ առհասարակ խօսելու լինինք գե-
ղացոց վերայ, էդ ուրիշ բան է: Պէտք է
քաղաքը քիչ թէ շատ ուսումով լցնուի, «որ
լափունը տայ՝ ածի գեղերը»: Բայց դեռ մեր
քաղքցիք իրանք չեն իմանում ուսման յարգն
ու կարեւորութիւնը, դեռ իրանք են մի բան
առնում, որ իրանց երեխին ուսման տան,
գեղացիք ի՞նչ տեղից կիմանան, կամ վերջապէս
նրանք ի՞նչ գիտեն, թէ ուսումն ի՞նչ է: Զօռով
բան չի լինիլ, տէր հայր, ամեն բան իրա ժա-
մանակն ունի, իրա պատճառը: Շատ անգամ
գարունքը գալիս է, որ ծառերի ծաղկելու
ժամանակն է, բայց շատ ծառեր չեն ծաղ-
կում, պատճառն ի՞նչ է.— ցուրտը տարած է
լինում նրանց: Մենք որ կանք հիմա՝ մէկ ցըր-
տատար, ջրատար աղբ ենք. մեզանից եթէ
հաղարից մէկը ծաղկի, էն էլ մեծ բան է. . .
Հասկանում ես իմ ասածը, տէրտէր ջան. . .

—Խնչպէս չեմ հասկանում, օրհնուած,
դու հէնց մեզ ամենքիս էլ երեխի տեղ ես
դրել . . .

—Դէ որ հասկանում ես, էլ ինչ ասեմ,
«գի որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ»։ Ասած
է, «Ականջը նրա համար չի շատ մեծանում,
որ շատ բան է լսում»։ Ես շատ խօսեցի, յոգ-
նեցայ. ի՞նչ անեմ, էրուած տեղեր ունիմ, ա-
սած է «Դարդ ունեցողը եանգշաղ կըլինի»։
Հիմի ես մի տեսակ եանգշաղ եմ դառել. յոյս
ունիմ, որ դու կըներես, տէր հայր . . .
Աօփիօ ջան, շուտ արա, սուիրէն գցիր . . .



2.

ՔՈՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ



րբ որ Օսանան եղբօրը
տարաւ իր մօտ, սկսեց
սլատմել նրան, թէ ի՞նչ
են դառնում գիւղից
քաղաք եկողները. թէ
քաղաքի ուսումնարան-
ները լաւ են, սովրեց-
նում են մի քանի լեզու.

թէ շատ անգամ գիւղից աղքատ երեխէք են
գալիս եւ ուսում առնելով՝ դառնում են վար-
ժապետներ, գրագիրներ, չինովնիկներ. թէ
ինչպէս նրանք հարուստ մարդի աղօրիկ են
ուզում եւ իրանք էլ հարստանում, թէ ինչպէս

այս եւ այն անձը աղայ է դառել, որ էլ ոչովի չի հաւանում, մոռացել է իր ստոր ծագումն ու չքաւորութիւնը . . .

Սյուպէս՝ երբ տան միւս անդամները գընացել էին իրանց գործին, քոյր ու եղբայր առանձնացած՝ մոռա՞ծում էին, թէ ի՞նչպէս լաւ կըլինէր Արութիւնի համար — մնա՞լ քաղաքումը, թէ՛ էլի յետ դառնալ գէպի գիւղ:

— Չէ, լաւ կանես, որ էլ գեղը չըգնաս, ասաց Օսանան. էստեղ ի՞նչ պէտք է սովորես. էդ տէրտէրն ինքն ի՞նչ գիտէ, որ քեզ ինչ սովորեցնէ . . .

— Եդ մի ասիլ, պաշտպանեց Արութիւնը իր տէրտէրին, էդպէս տէրտէր էս քաղքումը չի լինիլ. դա մէկ անյայտ փիլիսոփայ է. կաթողիկոսը որ գիտենայ, դրան եպիսկոպոսի խաչ կըտայ . . .

— Ի՞նչ ես ասում, ա տղայ, ընդգիմախօսեց Օսանան: Դա մեր Օվակիմի մօրաքրոջ որդին է, ես միթէ չեմ ճանաչում դրան: Մէկ օր խօսք բացուեցաւ, ես հարցրի Օվակիմին, նա թէ՛ «ձգնաւոր, բարեսիրտ մարդ է, բայց գլխումը խելք չըկայ. դրա համար

սուտն ու ճշմարիտը մէկ է, երկուսն էլ հաւատում է» . . . Էստեղ գեմնազիւումն էնպէս բաներ են սովորեցնում, որ դա իր օրումը լըսած չի լինիլ: Մեր հարեւան Սառի տղայ Եագորը հիմի գեմնազիւի վրայ չորս կլասումն է: Նրա մէրն էնպէս բաներ է ասում նրանից, որ մարդ լսի, կըմնայ զարմացած . . .

— Ի՞նչ բաներ է ասում:

— Ասում է իմ տղէն հիմի գիտէ, թէ էստեղից մինչեւ Մօսկով տրոյկի ակը քանի անգամ պտոյտ կըգայ: Նա, ասում է, գիտէ, թէ Ադամից մինչեւ հիմի քանի միսուտ է անցել: Աքաքու տէրտէրն էդ գիդի՞, քեզ ասել է՞ . . .

— Ես որ քաղքումը մնամ, էդ բաները կըսովորեմ:

— Ի հարկէ, կըսովորես: Որ մտնես Վանքի ուսումնարանը, յետոյ տէրտէր կըդառնաս. ուղենաս, գրագիր կըդառնաս Կօնձիստորումը, կամ թէ չէ՝ վարժապետութիւն կանես, ժամումն էլ տիրացուութիւն: Թէ որ խելօք կըլիս, մի հարուստ մարդ քեզ փեսայ կըշինի, կաշխատի, ձեռնադրել կըտայ մի հարուստ եկեղեցու վերայ: Կամ թէ չէ՝ թէ որ կուգես,

կըմտնես գեմնազիա, էնտեղ լաւ ռսերէն կը սովորես, յետոյ թագաւորական դոպլուզ կը մտնես, չինովնիկ կըդառնաս, տարէց տարի չինըդ կաւելանայ, մեծ մարդ կըդառնաս, համ քեզ կըլիս շահ, համ թագաւորին . . . հաբա . . .

—Որ գիմնազիումը լաւ սովորեմ, յետոյ մօղրով էլ կըդառնամ, չէ է . . .

—Մօղրովն ինչ է, դու նրանից էլ մեծ մարդ կըդառնաս, ենարալ կըդառնաս . . .

—Ո՛հ, ամմա մեծ մարդ կըլիմ հա . . . Ղորդ, էդքան կըբարձրանամ . . . Ե՛հ, ենարալ չէ որ, եթէ մի հասարակ դիլանդ էլ դառնալու ըլիմ, ես կըմտնեմ գիմնազիա: Այ, մեր գեղըցիք, լեզու չըգիտեն, օրէնք չըգիտեն, մի հասարակ եասաւուլի առաջ փափախնին վեր են կալնում, կշտին կուչ գալիս: Քանի անգամ եմ տեսել մօղրովին իմ հօրը ծեծելիս: Նոր չէր, որ բերդն էլ գցեցին, ուզում էին սիբիր ուղարկեն: Մէկ անգամ տարել էր մօտը, էլ բաց չէր թողնում, թէ դու ինձ պէտք ես, լեզու գիտես, ղօջաղ մարդ ես, դու ինձ պէտք է օգնես, որ բոլոր գողերին բռնոտենք:

Վար ու ցանքի ժամանակ է, խալին իրանց բանը վերջացրել են, մենք դեռ մի հատ ցորեն չենք քցել հողը: Մէկ էլ տեսանք, հրէս մօղրովը եկաւ մի հարիւր ձիաւորով: Եկան մեր դռանը վեր եկան: Երբ որ գնալու էին, հէրս ասեց.—Աղա, խնդրեմ ինձ մուրախաս անես, ես մենակ մարդ եմ, տանս ուրիշ աշխատող չունիմ, հիմի էլ ուրիշներին տար. թէ որ բէգառ է, պէտք է ամենքն էլ քաշեն: Նա թէ՛ չի կարելի, պէտք է գաս: Չեմ գալ, պիտի գաս, մի քիչ ընդդիմացաւ հէրս: Մօղրովը չիբխի գլուխը հանեց ու նրա կոթովը մին թէ երկու, հօրս գլխին ու երեսին . . . Էնքան խբեց, որ արնակոլոլ արաւ: Էնպէս բարկութիւնս եկաւ. մի մեծ քար վեր կալայ, որ տանեմ մօղրովի գլխին գցեմ, մեր մարդիկը խլեցին ձեռիցս, թէ՛ էդ ի՛նչ ես անում, գլիժ, ուզում ես, որ մեր սաղ գեղը կրակ տան, էրեն . . . Հաբա: Էնպէս բաներ եմ տեսել, որ սիրտս արնով լցուել է, աչքերս պէծին պէծին արել, հիմի էլ ամեն միտս գալով՝ ջանս սուսում է, մազերս փշաքաղում: Ես միշտ Աստըծուն աղաչանք եմ անում, որ

հոգիս չառնի, ինձ լեզու տայ, շնորհք տայ, որ ես դրանց բոլորի ջիգրը հանեմ, սիրտս հովաքնեմ. . . Ես որ չիմուխնիկ դառնամ, որ էլ ոչով իրաւունք չունենայ ինձ վրայ ձեռք վէր բերել, այնուհետեւ ես գիտեմ, թէ ինչեր կանեմ. . .

— Զէ, ես քեզ էլ չեմ տալ տէրաւերին, որ տանի, ես նրան պատասխան կըտամ: Մանուկի հետ միասին կերթաք Վանքի ուսումնարանը կամ թէ չէ՝ գեմնազիւ, որտեղ որ ձեզ յարմար կըլինի, էնտեղ կերթաք:

— Շատ լաւ, էդպէս արա: Ես էլ մի գիր կըգրեմ, որ մեր տանիցը ալիւր, բան ուղարկեն: Դու ինձ մի թուղթ ու թանաքաման տուր. . .

Արութիւնը դեռ չէր աւարտել իր նամակը, որ տէր Պետրոսը ներս մտաւ:

— Արութիւն, որդի, մենք ուշանում ենք. էստեղ քաղաք տեղ է, գարին, դարմանը թանկ է, — ասաց տէր հայրը, նստելով աթոռի վերայ, որ Օսանան առաջ քաշեց:

— Տէր հայր, ինչդրեմ Արութիւնին թողնէք մնայ այստեղ, ասաց Օսանան:

— Ես հէնց երազումս տեսայ, որ դու Արութիւնին պիտի ձեռիցս խլես: Յետոյ, քո հէրն էլ համաձայն կըլինի այդ բանին, գիտես, նրա համար քաղաքը մի սարսափելի բան է:

— Ես իմ հօրը կըհամաձայնեցնեմ:

— Լաւ, որդի, ես հօ չըկամութիւն չեմ անում: Ես Արութիւնին որդու պէս եմ պահել. ես ինքս էլ եմ ուզում, որ լաւ ուսում առնի, լաւ տղայ, խելօք տղայ դառնայ. ասաց տէր հայրը եւ ապա դառնալով Արութիւնին՝ հարցրեց.

— Արութիւն, որդի, ուզո՞ւմ ես մնալ:


— Հա, ասաց Արութիւնը ամաչելով:

— Լաւ, որդի. . . դէ խելօք կայ, առաւօտ, իրիկուն ժամ գնա, ժամ ասա, անառակ տղոց հետ ընկերութիւն չանես, կոճի չըխաղաս, չըգնաս Քռումը լողանալու, կամ Օրթաճալա ման գալու: Դու գիտես, ինձ չամաչացնես. էնպէս արա, որ մի ժամանակ ես էլ պարծենամ: Ինձ շուտ շուտ նամակ գրիր, մի նեղութիւն ունենաս, ինձ յայտնիր: Մնաս խաղաղութեամբ, Տէր ընդ քեզ:

Սրտիկներ համբուրեց տէր հօր աջը,
տէրտէրն էլ նրա գլխին մի «սահպանիչ»
ասեց եւ բոլորին խաղաղութիւն մաղթելով՝
դուրս գնաց . . .

ՎԵՐՉ ԱՌԱՋԻՆ ԳՐԶՈՅԿԻ





ՀՀ Ազգային գրադարան



NL0585557

ՀՀ Ազգային գրադարան



NL0585556

ՀՀ Ազգային գրադարան



NL0585555

